

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиан» (образование) еженедельник 22.05.2013թ. չորեքշաբթի թիվ 25 (582)

Նոր հրաշակերտ

Օձվեց Աբովյանի Սուրբ Հովհաննես Սկրտիչ եկեղեցին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ **Սերժ Սարգսյանի** եւ Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Բելառուսի Հանրապետության նախագահ **Ալեքսանդր Լուկաշենկոյի**, տեղի ունեցավ Աբովյանի Սուրբ Հովհաննես Սկրտիչ եկեղեցու օծման արարողությունը: Եկեղեցին, որի հիմնարկերը կատարվել էր 2006 օգոստոսի 24-ին, կառուցվել է տիար **Գագիկ Ծառուկյանի** բարերարությամբ:

Եկեղեցու օծմանը մասնակցում էին բազում հրավիրյալներ՝ Հայ եկեղեցու թեմակալ առաջնորդներ, ՀՀ ԱԺ ներկայացուցիչներ, ՀՀ կառավարության անդամներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Համայն Ռուսիո Պատրիարքի առաջնորդական փոխանորդ, **Վոսկրեսենսկի եպիսկոպոս Սավվայի** գլխավորած պատվիրակությունը, Անդրկովկասում Պապական նվիրակ Նորին Արքայապետին **Մարեկ արքեպիսկոպոս Սուլչինսկին**, ԵՀԽ Բոսեի եկուսնեիկ դպրոցի տնօրեն Հայր **Իուան Սաուկան** (Ռուսին Ուղղափառ եկեղեցի):

Նորակառույց եկեղեցու առջեւ Նորին Արքայապետը դիմավորեցին թեմակալ առաջնորդ **Տեր Առաքել եպիսկոպոս Քարամյանը** եւ թեմի հոգեւոր դասը, մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները եւ եկեղեցու բարերար Գագիկ Ծառուկյանը: Ողջույնի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցականների թափորով, օրհնելով հավաքված ժողովրդին, առաջնորդվեց Սուրբ Հովհաննես Սկրտիչ եկեղեցի, ուր սկսվեց տաճարի օծման հանդիսավոր կարգը:

Սաղմոսերգությանը, աղոթքներին ու շարականներին հաջորդեց օծումը, երբ **Սուրբ Խորան** բերվեց **Սրբալույս Մյուռոնը**, որով եւ Նորին Արքայապետը օծեց եկեղեցու **Սուրբ Սեղանը**: Արարողությանը մասնակից Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ **Տեր Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը**, ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ **Տեր Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը**, ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ **Տեր Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը**, Տավուշի թեմի առաջնորդ **Տեր Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը**, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը**, Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ, Հրատարակչական բաժնի տնօրեն **Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը**, Վայոց ձորի թեմի առաջնորդ **Տեր Աբրահամ եպիսկոպոս Սկրտչյանը**, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ **Տեր Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը**, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ **Տեր Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը**, Վիրահայոց թեմի առաջնորդ **Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ **Տեր Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը**, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ **Տեր Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը**, Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ **Տեր Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը**, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ **Տեր Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը**, Մայր Աթոռի լուսարարապետ **Տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը** օծեցին եկեղեցու մկրտության ավագանը եւ բոլոր սյուները:

շարունակությունը՝ էջ 5



ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի Հնորհավորական ուղերձը Վերջին դասի կապակցությամբ

Սիրելի՛ շրջանավարտներ, Ծնորհավորում եմ բոլորիդ՝ դպրոցում ուսումնառության ավարտի եւ Վերջին դասի կապակցությամբ:

Դուք այսօր հրաժեշտ եք տալիս արդեն հարազատ դարձած կրթօջախին՝ այնտեղ թողնելով ձեր պատանեկության անմոռանալի տարիները: Միաժամանակ հրաժեշտ եք տալիս ուսուցիչներին, որոնց սերն ու հոգատարությունը հիշելու եք մշտապես: Դուք թեակոխում եք կյանքի այնպիսի շրջան, որտեղ ձեզանից պահանջվելու է լինել առավել պատասխանատու եւ խոհեմ: Աշխատե՛ք հարստացնել ու խորացնել ձեր գիտելիքները կյանքի տարբեր բնագավառներում, հաստատուն քայլեր ձեր մախընտրած ճանապարհով, դարձե՛ք բարձրակարգ մասնագետներ եւ միշտ արժանավայել ու հպարտ կրե՛ք Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու ձեր կոչումը: Սովորե՛ք անսասան ու շիտակ քայլել ձեր ընտրած ճանապարհով եւ դարձե՛ք մեր հիմնավորց երկրին ու հայ ժողովրդին արժանի հետնորդներ:



Սիրելի՛ ուսուցիչներ, տարիներ շարունակ դուք դեպի կյանք եք ուղղորդել տասնյակ սերունդներ: Այսօր էլ հրաժեշտ եք տալիս դպրոցական ուսումնառության առաջին իսկ օրից հարազատորեն փայփայած, կրթած ու դաստիարակած ձեր սաներին: Ցանկանում եմ, որ նրանք դառնան թե՛ հարազատ դպրոցի, թե՛ մեր պետության անուր հենասյունը եւ իրենց ապագա հաջողություններով ու ձեռքբերումներով հպարտությամբ լի պահեր պարգևեն մանկավարժի բարձր կոչմանը հավատարիմ իրենց ուսուցիչներին:

Մտանց Հնորհավորում եմ Հայաստանում, հեռավոր Սփյուռքում, Արցախում եւ Ջավախքում ապրող մեր բոլոր շրջանավարտներին, ուսուցիչներին, ծնողներին՝ այս անմոռանալի օրվա կապակցությամբ եւ մաղթում անսահման երջանկություն ու հաջողություններ:

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի Հնորհավորական ուղերձը Վերջին գանգի կապակցությամբ

Սիրելի՛ շրջանավարտներ, ջերմագին Հնորհավորում եմ՝ ձեր կյանքի կարեւոր այս իրադարձության առիթով: Դուք այսօր դպրոցական գանգի դողանջներով հրաժեշտ եք տալիս աշակերտական կյանքին եւ ոտք դնում խանդավառ տարիքի մի շրջան, ուր որոշիչ դեր ունեն անձի նպատակասլացությունը, կամքը եւ պատասխանատվության զգացումը:



Մեր երկիրը, որի տարիքը հազարամյակներով է չափվում, ձեզ նման երիտասարդ մեր պետականությունը ձեր հորդուն մտքի թարմությամբ, նվիրվածությամբ եւ ստեղծագործ ոգու թռիչքով կդառնան մեր երազած հայրենիքը:

Դուք եք ժառանգորդը մեր ազգային արժեքների, դրանք հարստացնողը, զարգացնողը եւ փոխանցողը: Դուք եք քաղաքացիական հասարակության կերտողը եւ նույն այդ հասարակությանը արդարության, հանդուրժողականության եւ ազգօգուտ դիրքորոշման մղողը:

Սիրելի՛ շրջանավարտներ, ձեր ուսուցիչները եւ ծնողները արել են ամեն ինչ՝ անհոգ եւ երջանիկ ձեր մանկությունն ապահովելու համար: Իրենց հոգու կրակով լուսավորել են ձեր միտքը: Ձեզ հետ կապված նրանց հույսերի իրականացումը թող լինի ձեր երախտագիտությունը:

Ծնորհավորում եմ նաեւ նրանց՝ այսօրվա կապակցությամբ եւ հայտնում բոլորիս Հնորհավորությունը:

Սիրելի՛ շրջանավարտներ, մենք՝ ավագներս, հիանում, ոգեւորվում ենք ձեզանով, համոզված ենք, որ ձեր ստեղծագործ ուժը օգտագործելու եք մեր քաղաքի ու երկրի շենացման եւ ձեր երջանիկ վաղվա համար:

Խոսքս ավարտում եմ՝ մաղթելով բարի երթ, անձնական հաջողություն եւ բարձունքների նվաճում:

Համբարձման տոն

ՀՀ Նախագահի հովանու ներքո

Հանդիսավոր համերգով

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, կարեւորելով սերունդների՝ հայրենասիրական արժեքներով դաստիարակվելու գործում ազգային-եկեղեցական տոների հանդիսավոր կերպով նշումը կրթական հաստատություններում, ՀՀ Կրթության եւ գիտության, Սփյուռքի, Մշակույթի նախարարությունների, Երեւանի քաղաքապետարանի եւ Արարատյան Հայրապետական թեմի «Արարատ» հոգեւոր միության հետ համագործակցաբար Համբարձման տոնի նշանավորումը կազմակերպեց հանդիսավոր համերգով, որին հրավիրված էին Երեւանի հանրակրթական դպրոցների տնօրէններ, «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչներ եւ սիրիահայերի «Կիլիկյան» դպրոցի մանկավարժական համակազմը: Միջոցառումը տեղի ունեցավ Հայաստանի երգչախմբային ընկերության համերգասրահում:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի միջոցները կկրկնապատկվեն

Հայաստանի ազգային գրադարանում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել ՀՀ Նախագահի հովանու ներքո իրականացվող Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի (ԵԳԱԾ) ղեկավար եւ խորհրդատու մարմինների անդամների հետ: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը եւ ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը: Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության գիտության առաջընթացին եւ կադրային ներուժով համալրման գործընթացին, ինչպես նաեւ աջակցել հանրապետության երիտասարդ գիտնականների ստեղծագործական զարգացմանը: Ծրագիրն ունի չորս հիմնական ուղղվածություն՝ երիտասարդ գիտնականներին միջազգային գիտական գործուղումների ֆինանսական աջակցության տրամադրում, երիտասարդ գիտնականների գիտաժողովների, սեմինարների, դպրոցների, սեմինարների կազմակերպման ֆինանսական աջակցության տրամադրում, գիտական դրամաշնորհների տրամադրում, մրցանակաբաշխության կազմակերպում:



Հանդիպման ընթացքում ԵԳԱԾ պատասխանատուները Հանրապետության Նախագահին ներկայացրել են 2012թ. հուլիս - 2013թ. ապրիլ ժամանակահատվածում ծրագրի հիմնական արդյունքներն ու ձեռքբերումները, խոսել ընթացիկ աշխատանքների եւ հետագա ծրագրերի մասին: Ընդգծելով, որ ծրագրի օգտակարությունն անվիճելի է, Նախագահն առաջարկել է երիտասարդ գիտնականներին հետագայի համար մշակել նաեւ ծրագրի դիմանկան եւ արդյունավետությունը գնահատող համակարգ: Սերժ Սարգսյանը պատրաստակամություն է հայտնել շարունակել օժանդակությունը ԵԳԱԾ-ին եւ 2013 թվականի համար կրկին հատկացնել 100 մլն. դրամ: Նախագահը հանձնարարել է նաեւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարին՝ հաջորդ տարի պետա-

կան բյուջեով նախարարությանը հատկացվելիք միջոցներից եւս 100 մլն. հատկացնել այս ծրագրին՝ այդպիսով կրկնապատկելով ծրագրի միջոցները: Երիտասարդ գիտնականները շնորհակալություն են հայտնել Հանրապետության Նախագահին իրենց խնդիրների նկատմամբ ուշադրության եւ օժանդակության համար՝ խոստանալով տարեցտարի ավելացնել ծրագրերը, դրանց արդյունավետությունն ու շահառուների քանակը:

Շախմատ

Գերտերության հսկայական նվաճումները

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը տեղի է ունեցել Հայաստանի շախմատային ֆեդերացիայի հաշվետու-ընտրական համաժողովը, որը վարել է Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահ, Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը: Համաժողովն ամփոփել է հաշվետու ժամանակահատվածում 2011 թվականից ի վեր ֆեդերացիայի կատարած աշխատանքը, նախաձեռնել հետագա անելիքները: Մինչ օրակարգի հարցերին անցնելը, Նախագահ Սերժ Սարգսյանը նշել է, որ այս տարի համաժողովը հանձնել է հայկական շախմատի եւ ընդհանրապես հայ ժողովրդի պատմության նշանավոր իրադարձություններից մեկի՝ 50 տարի առաջ՝ 1963 թվականի մայիսի 20-ին, մեր ժողովրդի հանձնարելու գավակ Տիգրան Պետրոսյանի՝ աշխարհի շախմատի 9-րդ չեմպիոն հռչակվելու հոբելյանի հետ: «Անկասկած, կարելի է ասել, որ մեր շախմատիստների բոլոր հաջողությունները, փառահեղ նվաճումները Տիգրան Պետրոսյանի թողած այդ մեծ ավանդույթների ու ժառանգության շարունակությունն են կամ արգասիքը», - ընդգծել է Նախագահը: Սերժ Սարգսյանը գոհունակությամբ է արձանագրել, որ հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի շախմատային կազմակերպությունը հասել է հսկայական նվաճումների: Դրանցից Նախագահն ընդգծել է առանձնացրել է մի քանիսը՝ 2011 թվականին Հինաստանի Սինբո քաղաքում Հայաստանի ազգային հավաքական



նի՝ աշխարհի չեմպիոնի տիտղոսի նվաճումը, 2012-ին Թուրքիայի Ստամբուլ քաղաքում անցկացված համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի երրորդ անգամ օլիմպիական չեմպիոն հռչակվելը: Նախագահը երախտագիտություն է հայտնել Հայաստանի հավաքականի տղաներին եւ բոլոր նրանց, ովքեր ինչ-որ չափով աջակցել են, որպեսզի տաղանդավոր այդ շախմատիստները կարողանան դրսևորվել: Սերժ Սարգսյանը խոսել է նաեւ աղջիկների շախմատի Հայաստանի հավաքականի հաջող ելույթների մասին՝ նշելով, որ, իհարկե, իրենց նվաճումներում աղջիկները դեռեւս փոքր-ինչ ետ են մնում տղաներից: Նախագահը հույս է հայտնել, որ աղջիկների հավաքականն եւս կհաջողվի դառնալ չեմպիոն կամ գավաթ նվաճել: Հաշվետու ժամանակաշրջանը

նշանակալից է համարվել նաեւ այն առումով, որ Հայաստանը դարձավ աշխարհում առաջին երկիրը, որտեղ շախմատը մտավ հանրակրթական դպրոցների ծրագրի մեջ՝ որպես պարտադիր առարկա: Համաժողովի օրակարգի հաստատումից հետո, ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ Սմբատ Լպուտյանը, շարունակելով ֆեդերացիայի նախագահի խոսքը, ավելի մանրամասն ներկայացրել է կատարված աշխատանքները: Օրակարգի շրջանակներում ներկայացվել է նաեւ ֆեդերացիայի վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը, նախաձեռնվել են ֆեդերացիայի առաջիկա աշխատանքների հիմնական ուղղությունները: Հաշվետու ժամանակաշրջանում ֆեդերացիայի կատարած աշխատանքը գնահատվել է դրական:

Համաժողովի պատգամավորները քննարկել են հաշվետու զեկույցը, ներկայացրել նաեւ մարզերում շախմատի զարգացման ուղղությամբ վերոնշյալ ժամանակահատվածում իրականացված աշխատանքն ու առկա խնդիրները: Այնուհետեւ տեղի են ունեցել ֆեդերացիայի նախագահի, նախագահության կազմի ընտրությունները: Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահի ծրագրի մեջ՝ որպես պարտադիր առարկա: Համաժողովից հետո տեղի է ունեցել ֆեդերացիայի նորընտիր նախագահության առաջին նիստը: Նախագահությունը, ֆեդերացիայի կանոնադրության համաձայն, հաստատել է նախագահի տեղակալների, գործադիր տնօրենի, գլխավոր քարտուղարի թեկնածությունները, ովքեր մտնում են ֆեդերացիայի խորհրդի կազմի մեջ: Ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ է դարձել Սմբատ Լպուտյանը, տեղակալներ՝ Յուրի Առուստամյանը, Գագիկ Գեւորգյանը, Հովիկ Խալիկյանը, Լեւոն Յուլյանը, Տիգրան Սարգսյանը, Աշոտ Վարդապետյանը, գործադիր տնօրեն՝ Գրաչիկ Թավադյանը, գլխավոր քարտուղար՝ Գագիկ Հովհաննիսյանը: Հայաստանի շախմատային ֆեդերացիայի պատվավոր նախագահ է վերընտրվել Վանիկ Զաքարյանը:



Վասն մանկանց

Այց «Նազգաշյան մանուկների տուն»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հայաստանի Հանրապետության առաջին տիկին Ռիտա Սարգսյանն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Նազգաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոն՝ ուղեկցությամբ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տեր Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի եւ ՀՀ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

Հայ Եկեղեցու ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի հայկական բարեգործական «Մեր Հույս» կազմակերպության եւ անհատ բարերարների աջակցությամբ գործող կենտրոնում այժմ ապրում են սոցիալապես անապահով ընտանիքների 13-16 տարեկան 15 պատանիներ, ովքեր ստանում են մասնագիտական կողմնորոշում ու սոցիալական աջակցություն:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը եւ Հայաստանի առաջին տիկինը, ուղեկցությամբ կենտրոնի տնօրեն Միհրուան Միրիչյանի, շրջեցին կենտրոնում, ծանոթացան երեխաների համար ստեղծված պայմաններին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ տիկին Ռիտա Սարգսյանը հանդիպեցին կենտրոնի փոքրիկ բնակիչների հետ, ովքեր ներկայացրեցին իրենց առօրյան եւ ծրագրերը: Մտերմիկ զրույցից հետո պատանիները հանդես եկան գեղարվեստական հայտագրով՝ կատարելով ազգային ու հոգեւոր երգեր եւ ամուսնացող զուգուհիները հեղինակած բանաստեղծությունները:



ընդ ազգային ու հոգեւոր երգեր եւ ամուսնացող զուգուհիները հեղինակած բանաստեղծությունները:

Հնորակալություն հայտնելով ՀՀ առաջին տիկինը «Նազգաշյան մանուկների տուն» այցելելու համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ սպասված հանդիպումը մեծ ուրախություն պատճառեց երեխաներին եւ իրենց հանդես տիկին Սարգսյանի դրսևորած սերն ու հոգատարությունը մշտապես պիտի կրեն իրենց սրտում:

Վերջում տիկին Ռիտա Սարգսյանը կենտրոնի 15 սաներին հանձնեց նվերներ, առանձնաբար ծանոթացավ յուրաքանչյուրի հետ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հայաստանի առաջին տիկինն այցելեցին կենտրոնի հարեւանությամբ գտնվող Արաբկիրի հայորդյաց տուն, որտեղ հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Տեր Կոմիտաս վարդապետ Հովհաննյանը ներկայացրեց Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանու ներքո գործող հայորդյաց տների գործունեությունը: Հայորդյաց տան սաները Նորին Սրբությանը եւ տիկին Ռիտա Սարգսյանին ողջունեցին ազգային պարերի կատարումներով:

Համագործակցություն

Բարեկամության նոր հորիզոններ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկվայի ու Համայն Ռուսիոյի Կիրիլ Ա Պատրիարքի օրհնությամբ Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դաիլիզում տեղի ունեցավ Գեորգյան հոգեւոր ճեմարանի եւ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի միջեւ համագործակցության համաձայնագրի ստորագրման միջոցառումը: Այս առիթով Հայաստան է ժամանել Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի պատվիրակությունը՝ գլխավորությամբ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ուսումնական կոմիտեի նախագահ, ակադեմիայի ռեկտոր Վերեյսկու արքեպիսկոպոս Եվգենի:

Նրա կնիքատի ճեմարանների հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանը եւ կրթի համագործակցության նոր հորիզոններ», - նշեց Սրբազան հայրը:

Այս առիթով ներկայացրին իր խոսքն ուղղեց Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի տեսուչ Եվգենի արքեպիսկոպոսը՝ համաձայնագրի ստորագրումը կարելու քայլ նկատելով երկու Եկեղեցիների հարաբերություններում: Նա ընդգծեց երիտասարդների կրթության եւ եկեղեցականների պատրաստության կարեւորությունը՝ անդրադառնալով կրթական բարեփոխումներին, ինչպես նաեւ դրանց իրականացման գործում հոգեւոր ճեմարանների միջեւ համագործակցության եւ փորձառության փոխանակման անհրաժեշտությանը:

Կրթական հաստատությունների համագործակցության մեկնարկը ողջունեց նաեւ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տեր Հովակիմ Եպիսկոպոս Մանուկյանը: Այնուհետեւ հանդիսավոր կերպով ստորագրվեց համագործակցության համաձայնագիրը:

Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն աստվածաբանական, հումանիտար գիտությունների եւ հոգեւոր կրթության բնագավառներում, ինչպես նաեւ ուսումնական, գիտական, ուսումնամեթոդական եւ տեղեկատվական-հրատարակչական գործունեության համախմբում եւ ջանքերի միավորում՝ ի նպաստ միասնական հումանիտար գիտակրթական տարածքի ընդլայնման: Ստորագրված փաստաթղթով փոխադարձ համաձայնություն ձեռք բերվեց՝ մշակելու եւ ներդնելու հատեղ փոխլրացնող կրթական ծրագրեր, օգտագործելու դասախոսների փորձը՝ նրանց մասնակից դարձնելով համատեղ ուսուցման ծրագրերի մշակմանն ու իրականացմանն առանձին առարկաների կամ կրթական ծրագրերի շրջանակներում: Ծրագրվում է կազմակերպել համատեղ գիտական միջոցառումներ ու գիտահետազոտական ուսումնասիրություններ, ուսումնամեթոդական աշխատանքների բնագավառում՝ փորձի փոխանակում կատարել, նպաստել դասախոսների որակավորման բարձրացմանը, մշակել մանկավարժական տեխնոլոգիաներ: Նաեւ համատեղ հրատարակության կապտրաստվի գիտական ու կրթական գրականություն: Համաձայնագրի ստորագրումից հետո հոգեւոր երգերի կատարումներով հանդես եկան Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի եւ Գեորգյան հոգեւոր ճեմարանի երգչախմբերը:

Հանդիսությունը փակվեց Մայր Աթոռի Վանական խորհրդի նախագահ եւ Հրատարակչական բաժնի տնօրեն Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի օրհնությամբ խոսքով:

Արարողությունը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները, Գեորգյան հոգեւոր ճեմարանի դասախոսական կազմը եւ ուսանողությունը, ՀՀ-ում ՌԴ դեսպանատան խորհրդական Վիկտոր Կրիվոպոլսկովը, ՀՀ-ում ՌԴ սահմանապահ զորքերի հրամանատարի առաջին տեղակալ Յուրի Ուդիտովը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու ուսումնական կոմիտեի նախագահի օգնական, գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Գվոզդեւը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգ

Հարցուպատասխան

Երեխայի իրավունքների մասին

Հարց - «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան ե՞րբ է ընդունվել եւ ինչպիսի՞ պարտավորություն է առաջադրում մասնակից պետություններին:

Պատասխան - «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության կողմից, 1989 թ.: Մասնակից պետությունները հարգում եւ ապահովում են Կոնվենցիայով նախատեսված երեխայի բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար, առանց որեւէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական եւ այլ հանգանակներից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից եւ ծննդից կամ այլ կարգավիճակից: Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը խտրականության բոլոր ձևերից կամ պատժից՝ նրա ծնողների կամ օրինական խնամակալների կամ ընտանիքի այլ անդամների կարգավիճակի, գործունեության, արտահայտած հայացքների կամ հանգանակների հիմքով: Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական եւ այլ միջոցները սույն Կոնվենցիայով ճանաչված երեխայի իրավունքների իրականացման համար: Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների կապակցությամբ մասնակից պետություններն այդպիսի միջոցներ ձեռնարկում են իրենց տրամադրության տակ եղած ռեսուրսների առավելագույն չափի եւ, անհրաժեշտության դեպքում, միջազգային համագործակցության շրջանակներում:

Հարց - «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի հիման վրա, Հայաստանի Հանրապետությունը, որպես կոնվենցիայի մասնակից պետություն, ինչպիսի՞ օրենսդրական եւ ենթօրենսդրական իրավական ակտեր է ընդունել երեխայի իրավունքների վերաբերյալ:

Պատասխան - Հայաստանի Հանրապետությունը որպես կոնվենցիայի մասնակից պետություն եւ ի կատարումը կոնվենցիայի դրույթներին ընդունել է բազմաթիվ օրենսդրական եւ ենթօրենսդրական ակտեր: Նշում ենք այդ իրավական ակտերից այն կարեւորագույնները, որոնք անհրաժեշտ են այն պետական կամ հասարակական կազմակերպություններին, որոնք զբաղվում են երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով եւ խնդիրներով: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը ընդունվեց 1996 թվականին եւ համահունչ է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային: Այնուհետեւ հաջորդաբար ընդունվեցին «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմաններով կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքները: Երեխաների իրավունքների մասին կատարման ուղղված պարտադիր դրույթներ կան «Նախադպրոցական կրթության մասին», «Համարակրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին», ինչպես նաեւ «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքներում: Երեխաների իրավունքների պաշտպանության եւ նրանց հոգատարության վերաբերյալ կարելու դրույթներ են պարունակում «Պետական նպատների մասին» ՀՀ օրենքում: Վերջերս ընդունվեց նաեւ ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ծրագիրը, որտեղ կարելու դրույթներ են պարունակում երեխաների իրավունքների պաշտպանության գործում: Միաժամանակ ՀՀ կրթության գիտության նախարարության աշխատակազմի կողմից մշակվել եւ պետական գրանցում են ստացել «Ներառական կրթություն իրականացնելու կարգը», «Աշակերտական խորհուրդների ձեւավորման կարգը» եւ այլ ուղղությամբ բազմաթիվ գերատեսչական նորմատիվակտեր:

Հարունակությունը էջ 4

Երեխայի իրավունքների մասին

սկիզբը՝ էջ 3

Հարց - Երեխայի հիմնական իրավունքները սահմանված են «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով:

Պատասխան - Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում սահմանված են հետևյալ երաշխիքները: Պետությունը և նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար: Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի ամվան և քաղաքացիության իրավունք: Երեխայի ծննդյան փաստն օրենքով սահմանված կարգով գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից: Յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման և ամրապնդման իրավունք: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար օգտվելու հնարավորությունը, իրականացնում են երեխայի առողջության պահպանմանն ուղղված պետական նպատակային ծրագրեր:

Հարց - Իսկ ինչպիսի՞ կենսապայմաններ ունենալու իրավունք է սահմանված «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում:

Պատասխան - «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում սահմանված է, որ յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգեւոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ նրա օրինական ներկայացուցիչները: Ծնողների կամ նրա օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն:

Հարց - Երեխայի՞ բռնությունից պաշտպանության իրավունքը ինչպե՞ս է կարգավորվում «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում:

Պատասխան - Օրենքով սահմանված է, որ յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Պետությունը և նրա համապատասխան մարմինները իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ բռնադատության օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների օրինական շահերի այլ ոտնահարումից:

Հարց - Երեխայի իրավունքների մասին՞ կոնվենցիայով ինչպիսի՞ պարտականություններ է սահմանված մասնակից պետությունների համար երեխայի և ծնողների կապի ամրապնդման և երեխայի ընտանիքում ապրելու իրավունքների ուղղությամբ:

Պատասխան - Կոնվենցիայով սահմանված է, որ մասնակից պետություններն ապահովում են, որ երեխան, հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները գործող օրենքի և ընթացակարգի համաձայն կայացնեն որոշում, ինչը ենթակա է դատական վերահսկողության, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Նման որոշում կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները դաժանորեն են վարվում երեխայի հետ կամ հոգ չեն տանում նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում և հարկ է որոշում կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ: Մասնակից պետությունները հարգում են ծնողներից մեկից կամ երկուսից բաժանված երեխայի իրավունքը՝ կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին: Ընտանիքի վերամիավորման նպատակով երեխայի կամ նրա ծնողների դիմումները մասնակից պետություն ժամանելու կամ այնտեղից մեկնելու մասին մասնակից պետությունների կողմից պետք է քննարկվեն դրական, մարդասիրական և արագ կարգով: Մասնակից պետությունն այնուհետև ապահովում է, որպեսզի այդպիսի խնդրանքով դիմելը դիմողի և նրա ընտանիքի անդամների համար չհանգեցնի անբարենպաստ հետևանքների:

Հարունակությունը՝ էջ 5

Խրախուսվում են լավագույնները

Օլիմպիադա

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում ամփոփվել են 2012-13 ուսումնական տարվա դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքները: Հաղթողներին ողջունել և մրցանակներ է հանձնել ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ով, մասնավորապես, նշել է, որ այս տարի աշակերտներն աննախադեպ բարձր մասնակցություն են ցուցաբերել օլիմպիադաներին, ընդ որում՝ բոլոր առարկաների գծով:

«Գոհունակությամբ պետք է նշել, որ այս տարի մեծ է նաև մարզային դպրոցների մասնակցությունը և այն երեխաների քանակը, ովքեր առաջին անգամ են մասնակցում օլիմպիադաներին: Անկախ նրանից, որ համակարգում առկա են բազմաթիվ դեռեւս ամբողջությամբ չլուծված խնդիրներ, որ հասարակությունը պարբերաբար իր դժգոհությունն է հայտնում կրթության որակի նկատմամբ, սակայն իրականում հանրակրթական ոլորտում մենք ունենք կրթության ընկալելի մակարդակ, փայլուն երեխաներ, հրաշալի ուսուցիչներ, իրականում լավ դպրոցներ, որոնք պատիվ կբերեն յուրաքանչյուր երկրի: Սենք, իհարկե, կարող ենք ասել, որ դա մեր ազգի բնատուր տաղանդն է՝ սովորել, ծնողների ցանկությունն է՝ երեխայի համար ստեղծել լավագույն պայմանները՝ կրթություն ստանալու համար, բայց կարծում եմ, որ այստեղ պետությունն էլ ունի իր լուրջ ներդրումը և անտեսել պետական հոգածության արդյունքները, բարեփոխումների առաջին դրական պտուղները, մեր գործունեության արդյունավետությունը, մեղմ ասած՝ այդքան էլ ազնիվ չէ», - նշել է Արմեն Աշոտյանը՝ ընդգծելով, որ հանրապետական օլիմպիադաների բոլոր հաղթողները ցանկացած երկրում կարող են բարձր պահել Հայաստանի պատիվը:

Նախարարը նաև նշել է, որ հանրապետական փուլի հաղթողներից են կազմվում միջազգային օլիմպիադաների հավաքականները, որոնք, ըստ Արմեն Աշոտյանի, վերջին տարիներին բացառապես ձեւավորվում են՝ ըստ աշակերտների հաջողությունների և առաջադիմության: «Օլիմպիադաները տարեցտարի դառնում են առավել օբյեկտիվ, կիրառվում են գիտելիքների ստուգման նոր մեթոդներ: Ցանկանում եմ նաև նշել, որ մեզ համար չկան առաջին և երկրորդ կարգի օլիմպիադաներ. բոլորը մեզ համար նույն նշանակություն ունեն, եթե չասենք վերջին՝ հայագիտական և «Նախնական գիմնորական պատրաստություն» առարկաներից անցկացվող օլիմպիադաները հատուկ ուշադրության են արժանանում», - ընգծել է նախարարը՝ հավելելով, որ օլիմպիադաներն անցկացվում են ՀՀ բուհերի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Մայր Աթոռի և ՀՀ պաշտպանության նախարարության հետ սերտ համագործակցության արդյունքում:

Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն իր գոհունակությունն է հայտնել պարգևների հանձնման արարողությունը ՉԱԱ-ի նախագահությունում անցկացնելու կապակցությամբ, քանի որ այս տարի, ըստ Ռադիկ Մարտիրոսյանի, լրանում է ակադեմիայի 70-ամյա հոբելյանը: «Այն աշակերտների համար, ովքեր իրենց կյանքը կապում են գիտության հետ, օլիմպիական մեդալներն այդ հաղթանակներից մեկն



են, և մեզանից շատերը սիրով են հիշում այդ օրը: Ուզում եմ երախտիքի խոսքեր ասել բոլոր տաղանդավոր երեխաներին, նրանց շնորհալի ուսուցիչներին և կրթության ոլորտի կազմակերպիչներին, ովքեր ներկա դժվարին պայմաններում հասել են որոշակի արդյունքների», - ընդգծել է Ռադիկ Մարտիրոսյանը՝ հույս հայտնելով, որ նմանատիպ հանդիպումները հաճախակի կլինեն, որով էլ կամրապնդվի ակադեմիայի մասնակցությունը հանրակրթության ոլորտին:

Հաղթողներին շնորհավորել է նաև



ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Մանուկ Սկրտչյանը, ով հատուկ շնորհակալություն է հայտնել օլիմպիական հանձնաժողովների անդամներին և նախագահներին, ուն անշահախնդիր և նվիրական աշխատանքի շնորհիվ, ըստ փոխնախարարի, օլիմպիական շարժումը տարեցտարի բարձր որակ է ստանում, բայց ուն գործունեությանը ավելի քիչ անդրադարձ է կատարվում:

Մեզ հետ զրույցում 5-րդ դասարա-

նից տարբեր օլիմպիադաների մասնակից, «Աստղագիտության» միջազգային օլիմպիադայի բրոնզե մեդալակիր, «Կենսաբանություն» առարկայից առաջին կարգի և «Աստղագիտություն» առարկայից 3-րդ կարգի մրցանակակիր, Ֆիզմաթ դպրոցի սան Սիրանուշ Բաբախանովան ընդգծեց, որ մրցանակները շատ պարտավորեցնող են, քանի որ մարդիկ մեծ սպասումներ ունեն իրենցից: «Իմ երազանքն է գիտության մեջ բարձունքների հասնելը, իսկ մասնատիպ օլիմպիադաներն ուղղակի մի քայլ են, մի փուլ այդ ուղղությամբ: Այսինքն՝ օլիմպիադան գիտության տոն է և ոչ երբեք բաղձանք», - նշեց Ս. Բաբախանովան: «Ինֆորմատիկայ» առարկայից 1-ին կարգի մրցանակակիր, Ֆիզմաթ դպրոցի աշակերտ Կարեն Համբարձումյանը նշեց, որ իր համար սպասելի էր ստացված արդյունքը, որովհետև շատ է աշխատել այդ ուղղությամբ: «Ինֆորմատիկան ինձ համար ամենահոգեհարազատ ոլորտն է, և ես եմ ինչ կամեն՝ այս տարի Ավստրալիայում անցկացվելիք «Ինֆորմատիկայի» միջազգային օլիմպիադայում Հայաստանի համար բարձր կարգի մեդալներ բերելու համար», - մեզ հետ զրույցում նշեց Կարենը՝ հավելելով, որ իր նպատակն է՝ դառնալ ծրագրավորման ոլորտում լավագույն մասնագետներից: «Քվանտ» վարժարանի սան, «Աշխարհագրություն» առարկայից 1-ին կարգի մրցանակակիր Մարիաննա Ղազարյանն իր գոհունակությունը հայտնեց, որ հաջող տարի Հայաստանն առաջին անգամ մասնակցելու է «Աշխարհագրություն» առարկայից միջազգային օլիմպիադայի: «Շատ հուզված եմ և նաև շատ ոգևորված, քանի որ այսուհետ ավելի մեծ եռանդ ունեմ նոր գիտելիքներ ձեռք բերելու և բազմաթիվ օլիմպիադաներին մասնակցելու համար», - նշեց Մարիաննան:

Հավելենք, որ դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքում 16 առարկաների գծով առաջին կարգի մրցանակ է արժանացել 73, 2-րդ կարգի՝ 150 և 3-րդ կարգի՝ 170 աշակերտ: Եվս 700 դպրոցական արժանացել է գովասանագրերի: Ընդհանուր առմամբ օլիմպիադաներին մասնակացել է շուրջ 1700 դպրոցական:

Հեղինակ՝ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երեխայի իրավունքների մասին

սկիզբը՝ էջ 5

Հարց - Ինչպիսի՞ դրույթներ են սահմանված «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով...

Պատասխան - Կոնվենցիայով սահմանված է, որ մասնակից պետություններն ընդունում են մտավոր կամ ֆիզիկական խեղդումներով երեխան պետք է ապրի լիարժեք և արժանավայել կյանքով...

Հարց - Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար տնային ուսուցում նախատեսված է, թե՞ ոչ:

Պատասխան - «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ առողջական վիճակի պատճառով ուսումնական հաստատություններ ժամանակավորապես կամ մշտապես համախել չկարողացող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար կազմակերպվում է տնային ուսուցում...

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցումը իրականացնում է անձանց մշտական ուսումնառության վայրի ուսումնական հաստատության կամ այդ անձանց բնակության վայրին առավել մոտ գտնվող համապատասխան ուսումնական հաստատությունում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցումը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի, ուսումնական հաստատության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի և (կամ) նրա ծնողների (օրինական ներկայացուցիչների) միջև պայմանագրի հիման վրա:

Հարց - Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը ստացիոնար բուժական հաստատության պայմաններում ինչպե՞ս է կազմակերպվում:

Պատասխան - Անձի կրթության իրավունքն ապահովելու նպատակով կրթության և առողջապահության մարմինները պարտավոր են հանրակրթական ծրագրերին համապատասխան կազմակերպել ստացիոնար բուժական հաստատություններում երկարատե (ոչ պակաս, քան 21 օր) բուժման մեջ գտնվող երեխաների ուսուցումը: Ստացիոնար բուժական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունն իրականացվում է տվյալ բուժական հաստատության և օրենքով սահմանված կարգով իրավասու համարվող ուսումնական հաստատության միջև պայմանագրի հիման վրա:

Հարունակությունը՝ էջ 7

Ձեռքբերումների և խնդիրների շուրջ

Ասուլիս

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը պաշտոնում վերանշանակվելուց հետո առաջին հանդիպումը ՋԼՄ-ների հետ ունեցել է Մամուլի ազգային ակումբում:

Նախարարն անդրադարձել է իր պաշտոնավարման նախորդ տարիներին կրթության ոլորտում տեղ գտած ձեռքբերումներին ու խնդիրներին, ինչպես նաև ներկայացրել է կրթության համակարգի առաջիկա անելիքները, որոնք ներառված են ՀՀ կառավարության կողմից ներկայացված ծրագրում: Կատարված աշխատանքներից նախարարն առանձնացրել է իրենց ձեռքբերում: ՀՀ մարզերի 140 գյուղական համայնքներում դպրոցների կից բացվել են նոր նախակրթարաններ, ինչի շնորհիվ գյուղական բնակավայրերում մեծացել է նախադպրոցական կրթության հնարավորությունը: «Նախադպրոցական կրթությունը մեր հիմնական խնդիրներից է, քանի որ համայնքների 2/3-ը նախակրթարաններ չունեն: Այս ծրագրի ուղղությամբ աշխատանքները կլինեն շարունակական»,- նշել է Ա. Աշոտյանը և ավելացրել, որ մինչև 2017 թվականը ԿԳՆ-ն նախատեսում է երեխաների ներգրավվածությունը նախադպրոցական կրթության համակարգում հասցնել 90%-ի:

Հաջորդ ձեռքբերումը նախարարը համարում է բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներն ու կրթության որակի նոր չափանիշների սահմանումը, ինչով պայմանավորված՝ մասնավոր բուհերի լիցենզավորման պայմաններն էականորեն խստացվել են: Պետական վերահսկողության արդյունքում վերջին 4 տարվա ընթացքում ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակի կտրուկ նվազում է տեղի ունեցել: Նախարարի տեղեկացմամբ՝ նախկինում գործող 70-ից ավելի ոչ պետական բուհերի փոխարեն այսօր Հայաստանում գործում է 35 ոչ պետական բուհ: Նախարարը շեշտել է, որ փակված ոչ պետական բուհերի ուսանողների կրթական իրավունքները չեն տուժել: «Մենք չունենք գեթ մեկ ուսանող, ով նշված գործընթացի արդյունքում տուժել է: Բոլոր ուսանողներին հնարավորություն է տրվել կրթությունը շարունակել համապատասխան մասնագիտությամբ մեկ այլ բուհում»,- ասել է Ա. Աշոտյանը: Նա նաև տեղեկացրել է, որ շուտով ստուգումներ են սկսվելու բարձրագույն ուսումնական հաստատություններում, նպատակը այս կամ այն բուհը փակելը չէ, սակայն, օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում, որեւէ բուհ դրանից խուսափել չի կարող:



Երրորդ ձեռքբերումը «Շախմատը դպրոցում» նախագիծն է, որն արդեն դարձել է Հայաստանի կրթական համակարգի միջազգային բրենդը: «Դպրոցներում «Շախմատ» առարկայի դասավանդումը միջազգային մեծ արձագանք է ունեցել. առ այսօր այդ թեման հետաքրքրում է միջազգային առաջատար լրատվամիջոցներին, մեր փորձն այսօր աշխարհում համարվում է ուսանելի: Առաջին արդյունքների մասին արդեն գեկուցել ենք ՖԻԴԵ-ի նախագահության միտում: «Շախմատ» սովորող երեխաների մոտ նկատելի է ստեղծագործական մտքի և տրամաբանական մտածողության զարգացում»,- նշել է նախարարը՝ հավելելով, որ նախատեսվում է կատարել գիտական ավելի ընդգրկում ուսումնասիրություն, թե ինչպես է «Շախմատ» անդրադարձնում երեխայի հոգեբանությանն և ձեռնարկում վրա:

Հաջորդ ձեռքբերումը, ըստ Արմեն Աշոտյանի, այն է, որ, առանց «Ձիճակարտության մասին օրենքում» փոփոխություններ կատարելու, հաջողվել է կրճատել բանակից տարիներում ստացող ուսանողների թիվը, նախկին 10 հազարից այն հասցնելով 2500-ի, ինչը հաջողվել է ազգային բանակի հետ համագործակցության շնորհիվ:

Հինգերորդ կարևոր ձեռքբերումը նախարարը համարում է Հայաստանի կրթական համակարգի միջազգային կապերի ամրապնդումն ու զարգացումը: «Հայաստանի Հանրապետությունն ամրագրել է իր տեղը եվրոպական կրթական քարտեզում, միջազգայնացումը անհախադեպ չափերի է հասել, և երեւանը դարձել է եվրոպական կրթության մայրաքաղաք 3 տարի ժամկետով ստանձնելով Բոլոնիայի գործընթացի քարտուղարությունը»:

Անդրադառնալով բացթողումներին՝ Արմեն Աշոտյանը, որպես խնդիր, նշել է

կրթության որակի բարելավումը բոլոր մակարդակներում: «Կրթության որակի խնդիրը երբեք չի կարելի լուծված համարել, քանի որ ժամանակը միշտ նոր հրամայական ու մարտահարվել է առաջադրում: Թեև կրթության որակի բարելավմանը միտված մի շարք քայլեր արդեն կատարվել են ու դրանք կլինեն շարունակական, բայց պետք է խոստովանել, որ արդյունքները դեռևս չեն համապատասխանում մեր պահանջներին ու պատկերացումներին»,- նշել է նախարարը: Նրա խոսքով Հայաստանում կրթության որակը տարբեր կրթական հաստատություններում տարբեր է: «Մենք ունենք միջազգային մակարդակով մրցունակություն ապահովող դպրոցներ, միաժամանակ ունենք նաև դպրոցներ, որոնք չեն բավարարում մեր տարրական պահանջներին»:

Այսու կարևոր խնդիրը Ա. Աշոտյանը համարում է կրթության մատչելիությունը: Այն, ըստ նախարարի, լուծված է միջակարգ կրթության մակարդակում, ինչը չի կարելի ասել բարձրագույն կրթության ոլորտի մասին, թեև այստեղ ևս Կառավարության կողմից որոշակի քայլեր արդեն կատարվել են: «Մի քանի տարի առաջ իրավիճակը իսկապես ահազանգող էր: Այսօր «Փարոս» ծրագրում ընդգրկված ընտանիքների ուսանողների համար Կառավարությունն առաջարկում է 50-100% փոխհատուցում, ներդրվել է մատչելի ուսանողական վարկերի համակարգ: Քայլերն այս ուղղությամբ լինելու են շարունակական: Քաղաքական մոտեցումը են նպատակային թիրախը հետետեսով է՝ ոչ մի լավ սովորող ուսանող չպետք է դուրս մնա բուհից»,- շեշտել է նախարարը:

Նախարարը կրթության ոլորտի զարգացման կարևոր նախապայման է համարում նաև մասնավոր հատվածի և կրթական համակարգի համագործակցությունը: Նրա համոզմամբ կրթության ոլորտում պետք է ներդրումներ արվեն հենց գործատուների կողմից, մինչդեռ աշխատաշուկայի դեռևս չի կարողանում կրթական ոլորտին պահանջներ թեկադրել և պատվիրատու կողմ դառնալ:

Ասուլիսի ընթացքում նախարարը, պատասխանելով լրագրողների հարցերին, անդրադարձել է նաև բուհերում վարձավճարների բարձրացմանը, Հայաստանում միջազգային դպրոցների բացմանը, ընդունելության շտեմարաններին, դպրոցների կառավարման համակարգի փոփոխման հնարավորությանը վերաբերող և բազմաթիվ այլ խնդիրների:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՀ մշակույթի կենտրոն

Նվաճեցին «Արտ Ֆեստ»-ի Ոսկե մրցանակը

«Համազգային» թատրոնում տեղի ունեցած «ԱՐՏ ՖԵՍՏ» երիտասարդական փառատոնի մրցանակաբաշխության ժամանակ «Համալսարանական» թատրոն-ստուդիայի ներկայացումը ճանաչվել է լավագույնը:

Խոսքը Աղասի Այվազյանի մի քանի պիեսների հիման վրա բեմադրված «Ցուցակը» ներկայացման մասին է, որը երեւանի պետական համալսարանի մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի բեմում է հայտնվել 2008 թ.-ին: Գեղարվեստական ղեկավարը և բեմադրիչը կենտրոնի տնօրեն Կարինե Դավթյանն է, դերասանները՝ թատրոն-ստուդիայի սաների հին և նոր սերունդները, ովքեր բոլորովին էլ թատերական կրթություն չունեն:

Մասնագիտական ժյուրին, ներկայացնելով 2-րդ և 3-րդ տեղերում հայտնված գործերը, հայտարարեց, որ ոսկե մրցանակակիր չի լինելու, սակայն քիչ անց փառատոնի նախագահ Էրիկ Բարսեղյանը հավելեց, որ ժյուրին, բարձր գնահատելով համալսարանականների կատարած աշխատանքը, միաձայն որոշել է «Համալսարանական» թատրոն-ստուդիային հանձնել առաջին տեղի համար նախատեսված արձանիկը:

Հավելենք, որ նախնական փուլում երիտասարդական բաց փառատոնին մասնակցելու համար 178 հայտ էր ներկայացվել: Մասնագիտական հանձնաժողովն ընտրել էր լավագույն 20-ին, որոնք էլ անցել էին հաջորդ փուլ:

«Այն, որ մենք հայտնվեցինք լավա-

գույն 20-ի մեջ, արդեն իսկ հաղթանակ էր,- ասում է Կարինե Դավթյանը և հավելում,- իհարկե, մասնատիպ ձեռքբերումների համար նախ և առաջ պետք է շնորհակալ լինենք մեր ղեկավարությանը՝ ի դեմս ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի և ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանի, ում աջակցության և հոգածության շնորհիվ ենք մենք հաղթանակներ բերում Մայր բուհին, բուհ, որը միշտ էլ առանձնացել է ոչ միայն իր գիտակրթական բարձր մակարդակով, այլև ընդգծված մշակութային ոգով»:

ԵՊՀ հասարակության հետ կապերի և լրատվության վարչություն

Օլիմպիադա

Ընթերցման հերոսները

Երեւանը 2012 թ.-ի գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու կապակցությամբ...

Օլիմպիադան անցկացվում է 3 փուլով՝ դպրոցական, մարզային...

Նախորդ շաբաթ Հայաստանի գրողների միությունում տեղի է ունեցել «Ընթերցման» օլիմպիադայի եզրափակիչ փուլն...

Վերջին շրջանում հաճախակի են դարձել հոռետեսական կամխատետունները «գրքի մահամալու» մասին...

«Ընթերցման» օլիմպիադայի առաջին փուլը կայացել է նոյեմբերին, որին մասնակցել են շուրջ 10 հազար աշակերտներ...

Հաղթող է ճանաչվել Մարիա Նավասարդյանը: Երկրորդ է երրորդ տեղերը գրավել են համապատասխանաբար Սաթենիկ Միրաբյանն ու Ալեն Սարգսյանը:



փակիչ փուլի բոլոր մասնակիցները պարգևատրվել են հավաստագրերով, ինչպես նաև հովանավորների կողմից նախատեսված այլ մրցանակներով:

Նախաձեռնությանը աջակցել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը, որը եզրափակիչ փուլի մասնակիցներին համընդհանուր էլեկտրոնային գրադարաններ, որոնք նախատեսված են դպրոցների համար:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»

Ինտելեկտուալ խաղում հաղթեց Հունանիտար քուլտը

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողների շրջանում անցկացվեց «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղ-մրցույթը:

Խաղն անցկացվեց 2 փուլով, յուրաքանչյուրում 12 հարց: Ինտելեկտուալ խաղում հաղթեց Երեւանի պետական հունանիտար քուլտը, երկրորդ հորիզոնականում էր Երեւանի տարածաշրջանային թիվ 2 պետական քուլտը...

ՀՀ ԿԳՆ աշխատակազմի նախնական (արհեստագործական) և



միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության և ուսուցման բաժնի պետ Սասուն Համբարձումյանը նշեց, որ խաղ-մրցույթը եւս մեկ հնարավորություն է ինտելեկտուալ առումով միմյանց հետ մրցելու, իրար ճանաչելու և հետագայում համատեղ նախաձեռնություններով հանդես գալու համար:

Մարիա Նավասարդյանը հաղթեց Ս. Համբարձումյանը:

Ֆիտակների հայկական ասոցիացիայի նախագահ Տիգրան Քոչարյանը, ով վարում էր խաղը, նշեց, որ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ի նպատակը գիտելիքի զարգացումն է, այդ իսկ պատճառով աստիճանաբար կատարվում են խաղի հայաֆիլիպսոսկան աշխատանքներ՝ ինտելեկտուալ խաղին ներգրավելով նաև հայալեզու գիտակների:

սեփ.լր.

Երեխայի իրավունքների մասին

սկիզբը՝ էջ 6

Հարց - Ներառական կրթությունն ինչպիսի՞ դեպքում է կազմակերպվում:

Պատասխան - Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման սոցիալական հարմարվածությունը և նրանց հասարակական ներառումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնական հաստատություններում կազմակերպվում է ներառական կրթություն:

Հարց - Ինչպիսի՞ իրավունքներից են օգտվում Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:

Պատասխան - Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կրթական հաստատություններում, որոնք ապահովված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք իրավունք ունեն կրթական ծրագրերին, իրենց զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան ստանալու նախադպրոցական, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթություն՝ պետական և համայնքային հանրակրթական ուսումնական հաստատություններում, անվճար հիմունքներով:

հատուկ կրթություն՝ հատուկ և ներառական կրթություն իրականացնող հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում՝ անվճար հիմունքներով,

նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական, համապատասխան ուսումնական հաստատություններում՝ պետական կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք ուսումնառության ընթացքում իրավունք ունեն օգտվելու հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքներից և պարտականություններից, ինչպես նաև հաշմանդամության դեպքում օգտվելու օրենքով սահմանված արտոնություններից:

Հարց - Հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխայի իրավունքները ի՞նչպես են պահպանվում պետության կողմից:

Պատասխան - Պետությունը և նրա համապատասխան մարմինները հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխային երաշխավորում են անվճար մասնագիտացված բժշկական, արտաբանական և հոգեբանական օգնություն, իր հնարավորություններին համապատասխանող բազային և մասնագիտական կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, սոցիալական վերականգնում, լիարժեք կյանք նպատակով նրա ինքնավստահության ամրապնդմանը, դյուրացնելով նրա մասնակցությունը հասարակական կյանքին: Նման երեխաները կարող են իրենց ցանկությամբ սովորել հանրակրթական դպրոցներում: Պետությունը և նրա համապատասխան մարմինները նրանց համար ստեղծում են հատուկ մանկատներ, գիշերօթիկ հաստատություններ, իրականացնում են հաշմանդամ երեխաների բուժման հետեւանքով նրանց թվաքանակը նվազեցնող սոցիալ-տնտեսական միջոցառումները, կազմակերպում են հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական սարքերի արտադրությունը և դրանց ձեռքբերումը: Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հաշմանդամ երեխաներն ունեն հաշմանդամության սայլակների, պրոթեզա-օրթոպեդիկ կոշիկների ու բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացի թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզներից) և հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական այլ սարքերի (առարկաների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հարց - Արտակարգ իրավիճակներում հայտնված երեխայի իրավունքը օրենքով ի՞նչպես է պաշտպանվում:

Պատասխան - «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ արտակարգ իրավիճակներում հայտնված երեխային պետությունը տրամադրում է անհապաղ և անվճար օգնություն, միջոցներ է ձեռնարկում վտանգավոր գոտուց նրան տեղափոխելու, ընտանիքի հետ վերամիավորելու, անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար: Պետությունը և նրա համապատասխան մարմիններն ապահովում են արտակարգ իրավիճակներում հայտնված երեխայի սոցիալական դաշտապանվածությունը՝ հոգալով նրա առաջնահերթ կարիքները: Արգելվում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին, ինչպես նաև երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությունը, մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը: Արգելվում է մինչև 15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին: Ձինված հակամարտությունների ժամանակ պետությունը և նրա համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը:

(Հարունակելի) Կրեժ ՍԱՐԳՍՅԱՆ

Աշխարհի հետ

Միջուկային անվտանգության խնդիրները ուշադրության կենտրոնում

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) և ԱՄՆ Էներգետիկայի պետդեպարտամենտի միջև համագործակցության շրջանակներում ՀԴԳՅ Միջուկային անվտանգության վարժանքային տարածաշրջանային կենտրոնում մեկնարկեց ատոմային էներգետիկայի և միջուկային գիտելիքների երկշաբաթյա սեմինար-վարժանքը:

Սեմինար-վարժանքն անցկացնելու նպատակով Հայաստան են ժամանել ԱՄՆ Վիսկոնսինի համալսարանի ներկայացուցիչ **Ջոն Մերֆին** և ԱՄՆ հանրահայտ «Արգոն» ուսումնական կենտրոնի Միջուկային ճարտարագիտության դեպարտամենտի մասնագետ **Ջասթին Պենսը**: Բացի արտասահմանցի մասնագետներից՝ սեմինար-վարժանքի մի շարք դասընթացներ կանցկացնեն ՀԴԳՅ էներգետիկական ֆակուլտետի Ջերմաէներգետիկայի և շրջակա միջավայրի պաշտպանության ամբիոնի պրոֆեսորները և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության Ատոմային էներգետիկայի վարչության

պետ **Արամ Գետրոյանը**:

Ինչպես նշեց ՀԴԳՅ Միջուկային անվտանգության վարժանքային տարածաշրջանային կենտրոնի տնօրեն **Մերի Ղազարյանը**, բացի դասախոսություններից՝ առցանց ռեժիմով կանցկացվեն նաև գործնական և լաբորատոր աշխատանքներ ԱՄՆ-ի Վիսկոնսինի համալսարանում տեղակայված փորձարարական ռեակտորների վրա, ինչը, անկասկած, կբարձրացնի ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Ջասթին Պենսը, ողջունելով առաջին սեմինարի մասնակիցներին և կազմակերպիչներին, ընդգծեց, որ արդեն երկար ժամանակ է, ինչ ԱՄՆ էներգետիկայի պետդեպարտամենտը համագործակցում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի հետ, սակայն սա ուսումնական ծրագիր իրականացնելու առաջին փորձն է, որի հիմնական թեման միջուկային էներգետիկան է և, մասնավորաբար, միջուկային ռեակտորները:

Խոսելով դասընթացի կազմակերպչական հարցերի շուրջ՝ Ջոն Մերֆին ասաց, որ դասընթացը



կիրականացվի ազատ ու անկաշխարհ միջավայրում, և հատուկ առաջադրանքների միջոցով կխթանվի սովորողների կրիտիկական մտածելակերպը և ճգնաժամային իրավիճակներում օպտիմալ որոշումներ կայացնելու կարողությունը:

ՀԴԳՅ Ջերմաէներգետիկայի և շրջակա միջավայրի պաշտպանության ամբիոնի պրոֆեսոր **Ռուտանիկ Մարուխյանը**, ողջունե-

լով ծրագրի իրականացման գաղափարը, նշեց, որ այն շարունակական բնույթ կրող ծրագրի միջոցառում է: «Կուզենայի տեղեկացնել, որ վերջերս մեր հյուրերի հետ ստորագրվեց յոթամյա ծրագիր իրականացնելու վերաբերյալ համաձայնագիր, որի շրջանակներում ամռանը տեղի կունենա հերթական թրեյնինգը: Այն կվերաբերվի ատոմային էներգետիկային և արտակարգ իրավիճակներում արագ արձագանքմանը»,- ասաց Ռ.Մարուխյանը:

Արժանքին մասնակցում են ՀԴԳՅ «Ատոմային էլեկտրական կայաններ և տեղակայանքներ», «Ջերմաէներգետիկա» մասնագիտություններով և Երեւանի պետական համալսարանի «Միջուկային ֆիզիկա» մասնագիտությամբ սովորող ուսանողները, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության Ատոմային էներգետիկայի վարչության, ինչպես նաև «ՀայԱտոմ» գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցները:

Դասընթացի ավարտին բոլոր մասնակիցներին կտրվեն համապատասխան վկայագրեր, իսկ արդյունքներից ելնելով՝ նախատեսվում է առաջարկ անել ՀԴԳՅ մագիստրատուրայում համապատասխան ընտրովի դասընթաց մտցնելու մասին:

Վերոնիկա ԽՈՐԱՍԱՆՅԱՆ
ՀԴԳՅ (Պոլիտեխնիկ)
հասարակայնության
հետ կապերի
և տեղեկատվության բաժին

Տնտեսագիտական համալսարան

«Արձակ-2013» պատմվածքի մրցույթ

ՀԴԳՅ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր **Սիմոն Հակոբյանի** հետ համատեղ ամիսներ առաջ նախաձեռնել էր պատմվածքի մրցույթ: ՀԴԳՅ ռեկտոր **Կորյուն Աթոյանը** սիրով աջակցեց մրցույթի անցկացմանն ու կայացմանը:

Մրցույթի մասին ազդարարող առաջին լուրը, որը ներկայացնում էր մրցույթին առաջադրվող պայմանները, ՀԴԳՅ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվեց դեկտեմբերի 12-ին: Դրան հաջորդեց պատմվածքների հոսքը, որի ընթացքում կազմկոմիտեն ստացավ 58 աշխատանք: Դրանք տարբեր էին բովանդակությամբ, մատուցմամբ, պատկերային մտածողությամբ, սակայն հիմնականում, բավարարելով առաջադրված պահանջները, տեղ գտան մրցութային պատմվածքների շարքում: Արդյունքում՝ բացահայտվեցին տնտեսագիտական բուհում ուսանող և աշխատող մարդկանց ստեղծագործական ունակությունները, գրականության, մշակույթի հանդեպ նրանց ունեցած անսահման սերը:

Այսպիսով՝ ամիսների աշխատանքից հետո մրցույթն ամփոփվեց շքեղ հանդիսությամբ: Մայիսի 14-ին տնտեսագիտական համալսարանի մեծ դահլիճում ՀԴԳՅ ռեկտոր, մրցույթի պատվավոր նախագահ Կորյուն Աթոյանի, պրոռեկտորների, գրականության և մշակույթի հանդեպ իրենց հո-



գում անսահման սեր կրող դասախոսների, ուսանողների և, իհարկե, մրցութային պատմվածքների հեղինակների մասնակցությամբ տեղի ունեցավ հանդիսավոր մրցանակաբաշխությունը, որը դարձավ մի յուրօրինակ գովք ու փառաբանում գրին ու գրականությանը, գրասերներին ու գրչի մարդկանց: Հանդիսությունն սկսվեց Պարույր Սեւակի «Ի՞նչը, ինչպե՞սը և որպե՞սը» հոդվածի ընթերցումով:

«Թեև սիրում են կրկնել, որ բուհը մասնագիտական բարձրա-

գույն կրթության օջախ է, այնուհանդերձ, հասարակության լիարժեք անդամ դառնալու համար անչափ կարևոր է շփումը գրականության, մշակույթի հետ: Հային աշխարհում ծանաչում են՝ որպես դպրության, մշակույթի, կրթության ջահակիր, և մենք միշտ պիտի վար պահենք այդ ջահը»,- Արձակ-2013 պատմվածքի մրցույթի հանդիսավոր արարողության ժամանակ ասաց ՀԴԳՅ ռեկտոր Կորյուն Աթոյանը:

Արձակ-2013 պատմվածքի մրցույթի հաղթանակի դափնին

շնորհվեց չորս պատմվածքների հեղինակներին, յուրաքանչյուրը պարգևատրվեց 50.000-ական դրամով: Հաղթողներ դարձան **Երանուհի Սկոյանը** («Թաթիկներից մինչև ձեռք»), **Լիլիթ Դադայանը** («Վարդն ի՞նչ արժե»), **Սկրտիչ Մուրադյանը** («Յո ղու բիժա՞ չես») և **Էլեն Ուլյանը** («Ֆաներային արե»): Դրամական պարգևները, հավաստագրերն ու ՀԴԳՅ պաշտոնական «Տնտեսագետ» ամսագրի նոր համարները նրանց հանձնեց ռեկտոր Կորյուն Աթոյանը: Հաղթող քառյակից բացի՝ մր-

ցալանը մրցանակներ շնորհեց նաև անվանակարգերում: «Ընթերցողի հեղինակ» անվանակարգում մրցանակի արժանացավ **Նորայր Սարգսյանը**՝ «Կյանքը երկար ինքնասպանություն է» պատմվածքի համար: «Ինքնատիպ գրելաժ» մրցանակը շնորհվեց «Բնակարանի անվճար ջեռուցում» պատմվածքի հեղինակ **Նարինե Հարությունյանին**: «Հայրենասիրական լավագույն ստեղծագործություն» ճանաչվեց **Անի Խամոյանի** «Հայերի գաղտնի զենքը»:

Նրանց անունները հայտարարեց մրցատյանի նախագահ, հանդիսության սցենարի հեղինակ և հանդիսավոր **Սիմոն Հակոբյանը**: Ինչպես պատմվածքի մրցույթի կազմկոմիտեն նախապես խոստացել էր, մատուցվեցին բազմաթիվ անակնկալներ. ներկայացվեց «Տնտեսագետի» նոր համարը, որտեղ տպագրված էր **Երանուհի Սկոյանի** «Թաթիկներից մինչև ձեռք» պատմվածքը: Չորս հաղթողներին նկարիչ **Արթուր Հարությունյանը** նվիրեց միջոցառման ընթացքում կատարած ընկերական շարժերը, հանդիսությանը փայլ ու երանգ հաղորդեց մանկական պարի համույթը՝ ՀԴԳՅ կառավարման ֆակուլտետի ուսանողուհի **Աննա Ալեքսանյանի** ղեկավարությամբ:

Արձակ-2013 պատմվածքի մրցույթն ամփոփվեց՝ թողնելով ստեղծագործական նոր նախաձեռնությունների սպասում:

ՀԴԳՅ Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

Դեպի «Վերնատուն». Դմիտրի Նալբանդյան

«Առաջարկվեց «Վերնատուն» անունը՝ իբրև Թունանյանի բարձրահարկ բնակարանին հարմար անուն: Այդ դուր եկավ մեզ: Դա հիշեցնում էր մի ուրիշ վերնատուն, ուր հավաքվեցին Քրիստոսի աշակերտները: Դրա մեջ ինչ-որ հոգեկան ներքին իմաստ կար...»:

Դերենիկ ԴԵՄԻՐՃՅԱՆ


Հայ մշակույթի հետ այս հոգեւոր ներքին կապը վերագտնելու, մեր մեծամեծերի կողքին գեթ մի պահ հայտնվելու եւ վերնատան մթնոլորտը զգալու համար ժամանակի մեքենա հայտնագործելու կարիք չկա: Բավական է կանգնել **Դմիտրի Նալբանդյանի** համանուն կտավի դիմաց եւ դու արդեն այնտեղ ես: Այս երկը վերնատունը մարդաշատ է: Ընադրձակ, լուսավոր ու համեստ կահավորված սենյակում հավաքվել է մեր մշակույթի սերունդը, իսկական աստղաբույլ՝ Յոզեֆ Գեյտեի, Ռոմանյան, Ղազարոս Աղայան, Ավետիք Իսահակյան, Լեւոն Շանթ, Պետրոս Ադամյան, Վահան Տերյան, Ալեքսանդր Սպենդիարյան եւ այլ թանկ ու հիշարժան անուններ: Ներկաները բաժանված են երկու մեծ խմբի. ոմանք կանգնած են, ոմանք նստած, բայց աշխույժ գրույցով չեն տարվել, բոլորի ուշադրությունը կենտրոնացած է կարծես համակ լսողություն են դարձել ու հայացքների կիզակետը սենյակի կենտրոնում դաշնամուրի մոտ նստած Կոմիտասն է: Վարդապետը ոգեշնչված նվագում է, ու թվում է, թե դու էլ ես լսում այդ մաքրամաքուր հնչյունները...

Ի դեպ, բոլորիս հայտնի այս կտավը, որը հեղինակը ստեղծել է 1974-1976 թթ., գտնվում է Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում: Ինչպես նշեց Հայաստանի ազգային պատկերասրահի (ՀԱՊ) Հայ գեղանկարի բաժնի ավագ գիտաշխատող Հայկուշ Սահակյանը, անցած տարի հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջոցառումների շրջա-

նակներում մեծ ջանքերի շնորհիվ հաջողվեց «Վերնատունը» ժամանակավոր ցուցադրության նպատակով բերել Հայաստան: Կտավը ՀԱՊ-ում «*հյուրընկալվեց*» շուրջ կես տարի, այն «Վերնատունը եւ *հայ գրողները*» ցուցահանդեսի առանցքն էր: Հ.Սահակյանի գնահատմամբ՝ կրթության այս նկարի ցուցադրությունը բացառիկ հնարավորություն էր հայ արվեստասերների համար, հրաշալի առիթ՝ ծանոթանալու բնօրինակին, որը գեղարվեստական

կրթացի այդ բացը: Դ.Նալբանդյանի կենսագրական տեղեկությունները բավականին սուղ են, եւ ցավով պետք է նկատենք, որ նրա համբավն ավելի մեծ է Ռուսաստանում, քան մեր երկրում: Նկարիչը ծնվել է 1906 թ.-ին, Թիֆլիսում: Վաղ հասակում կորցնելով հորն ու բազում գրկանքներ կրելով՝ 16-ամյա պատանին ընդունվում է գեղարվեստի ուսումնարան, որն ավարտելուց հետո կրթությունը շարունակում է Թիֆլիսի գեղարվեստի

ստեղծագործական առաջընթացին, ընդհակառակը, խորհրդային տարիները նպաստել են դրան: Նրա առաջին աշխատանքները բարձր գնահատականի են արժանացել այդ ժամանակաշրջանի մամուլում: Դ.Նալբանդյանն իմպրեսիոնիզմի մեծ վարպետ էր: Նա պատկերել է խորհրդային գրեթե բոլոր առաջնորդների դիմանկարները, պատահական չէր, որ նրան համարում էին քաղցրուրոյի առաջին վրձինը: Հայրենական պատերազմի տարիներին Դ.Նալբանդ-



սքանչելի բնապատկերներ եւ նատյուրմորտեր: Ժամանակակիցների խոսքերով, արտերկրյա ճամփորդություններից նա վերադառնում էր հարյուրավոր ուրվապատկերներով եւ դրանցից ծնունդ էին առնում թեմատիկ կտավների շարքեր Իտալիայի եւ Հունաստանի, Ֆրանսիայի եւ Իսպանիայի, Անգլիայի ու Ճապոնիայի մասին: Դ.Նալբանդյանը հատկապես սիրել է Հնդկաստանը, որտեղ նրա արվեստն արժանացել է Ջավահարլալա Ներույի անվան պարգևին: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Ֆրանսիայում, Ֆինլանդիայում, Ճապոնիայում եւ այլուր: Տաղանդաշատ նկարիչը մասնակցել է ԽՍՀՄ Գեղարվեստի Ակադեմիայի կազմակերպմանը, եղել է նույն ակադեմիայի անդամ, արժանացել է բազմաթիվ այլ պատվավոր կոչումների ու պարգևների: Նրա աշխատանքները գտնվում են նախկին խորհրդային Միության առաջատար թանգարանների հավաքածուներում, «*Ինքնադիմանկար*» կտավը գտնվում է «*Ուֆֆինգի*» պատկերասրահում (Ֆլորենցիա): Մահից հետո Մոսկվայում գտնվող նրա արվեստանոցը գործում է որպես Դ.Նալբանդյանի անվան պետական թանգարան: Հ.Սահակյանի հաղորդմամբ, ՀԱՊ-ում են գտնվում նկարիչի ինը աշխատանքներ, որոնցից ստեղծագործական յուրօրինակ լուծումներով ու ջերմ հուզականությամբ հատկապես առանձնանում է Դ.Նալբանդյանի մոր դիմանկարը:


Արփինե ԱՆԴՐԵԱՅԱՆ



պատկերի համադրության ու գունային լուծումների, կերպարների հավաստիության ինչպես նաեւ մեծադիր չափերով շատ տպավորիչ էր: Հեղինակն այս ստեղծագործության համար 1978 թ.-ին արժանացել է ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի ոսկե մեդալի: Պարադոքսալ է, բայց մեզնից շատերը, դեռ դպրոցական տարիներից քաջածանոթ լինելով նկարին, անտեղյակ ենք հեղինակի մասին: Հուսանք՝ այս հոդվածը

ակադեմիայում: 1931 թ.-ին Դ.Նալբանդյանը հաստատվում է Մոսկվայում, որտեղ էլ, դառնալով նկարիչների միության անդամ, ակտիվ ստեղծագործական գործունեություն է ծավալում: Ուշագրավ է, որ խորհրդային վարչակարգի մշակութային հայտնի սահմանափակումներն ու խիստ գրաքննությունը՝ այն, ինչը մեծ խոչընդոտ էր այլ արվեստագետների ինքնադրսեւորման համար, բնավ չի խանգարել գեղանկարչի

յանը ճամփորդում է Հայաստանով մեկ, ինչի արդյունքում ծնվում է մեր ազգի առաջադեմ ներկայացուցիչների դիմանկարների շարքը. Ավետիք Իսահակյան, Արամ Խաչատրյան, Ստեփան Ջորյան, Արտեմ Միկոյան, Հովհաննես Բաղդամյան եւ այլք: Նրա արվեստը բազմաժանր է: Գիշտ է, հայտնի է նախեւառաջ իր դիմանկարներով, բայց նույնպիսի վարպետությամբ կերտել է պատմահեղափոխական թեմայով գործեր,



Լույս է տեսել

Նորություն գրաքարի բառարանագրության ասպարեզում

Գրաքարի բառարանագրության ասպարեզում նորություն է վերջերս հրատարակված «Գրաքարի ուսումնական բառարան»-ը (Երևան, «Ձանգակ-97» հրատարակչություն, 2013թ., 408 էջ), որը հեղինակել է Խ.Աբովյանի անվան ԳՊՄՅ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Մ. Խաչատրյանը:

Լեզվաբան Լ.Խաչատրյանը նոր անուն չէ բառարանագրության ասպարեզում: Հանրահայտ «Նոր բառգիրք հայկազգեան լեզուի» (հ.հ. Ա, Բ, Վեներտիկ, 1836-1837), «Առձեռն բառարան հայկազգեան լեզուի» (Վեներտիկ, 1846, երկրորդ հրատ. 1865) աշխատություններից հետո Լ. Խաչատրյանը մեզանում առաջին բառարանգիրն է, որ կազմել է գրաքարի համառոտ և ընդարձակ բառարաններ (Խաչատրյան Լ. Մ., «Գրաքարի տարածք բառերի բացատրական բառարան», Երևան, 1998: «Գրաքարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարածք բառեր», Երևան, 2003):

Հեղինակի կազմած սույն բառարանն ընդգրկում է V-XI դդ. գրաքար մատենագրության մեջ սիռլանդ շուրջ 10 հազար բառ՝ ընտրության որոշակի սկզբունքով: Ելնելով բառարանի նպատակից, խնդիրներից և գործնական արժեքից՝ հեղինակը բառարանում գտնել է մատենագրական այն հուշարձանների նյութը, որ նախատեսված է հունանիտար բուհերի գրաքարի դասընթացով՝ գործնական աշխատանքների և թարգմանությունների համար: Հրապարակի վրա եղած գրաքարի հայտնի բառարաններն անմատչելի են ուսանողներին, մյուս կողմից՝ գրաքարի գործնական դասագրքերում գտնված բառացանկերը լիարժեքորեն չեն ընդգրկում բնագրերի ծրագրային հատվածների բառապաշարը, հետևաբար ուսանողի սեղանին պետք է դրվեր գրաքարի համեմատաբար ընդարձակ ուսումնական-բացատրական բառարան: Այս բառարանը, նպաստելով բուհական ծրագրով նախատեսված մատենագրական երկերի թարգմանությանը, որոշակի քերականական գիտելիքներ է հաղորդում գրաքարից: Ըստ այդմ, յուրաքանչյուր գլխաբառի բառահոգվածում այն ներկայացնում է ոչ միայն բառի մասուններն ու նրանց նրբերանգները, այլև տալիս է բառի խոսքիմասային քերականական հիմնական բնութագրերը: Անդրլեզվի ամբողջությունը յուրահատուկ քերականական տեղեկատու է, որ սովորողները պարտավոր են յուրացնել՝ բնագրում այս կամ այն բառի իմաստը ճիշտ ըմբռնելու և ճիշտ թարգմանելու համար:

Հեղինակը բառարանի առաջաբանում այսպես է մեկնաբանել իր խնդիրները. «Մենք աշխատել ենք յուրաքանչյուր բառահոգվածում ներկայացնել գլխաբառի ոչ թե հնարավոր բոլոր նշանակությունները, այլ փորձել ենք մատուցել էականը, գլխավորը, որոնք կարող են օգնել ուսանողին, թարգմանչին՝ ընտրելու բնագրային բառի հիմնական, գլխավոր նշանակությունը: Այն դեպքում, երբ վերոբերյալ բառարաններում բազմիմաստ բառերը տրված են մեկ տասնյակից ավելի նշանակություններով, մենք բավա-

րարվել ենք նման բառերի համար 4-5 հիմնական իմաստ վկայելով, որոնք կարող են բավարարել գրաքարյան բնագրերը լիարժեքորեն թարգմանելու խնդրին» (էջ 4):

Բառարանում որպես առանձին գլխաբառեր ներկայացված են՝ հենակետային բառերը (Քաջ, Քաջաբար, Քաջագոյն, Քաջանուն), բառակազմական տարբերակները (Վանատու-Վանատուր), միեւնույն բառի համարակալան և վերլուծական տարբերակները (Ակն ածել - Ակնածել Մահու չափ - Մահու չափ), հնչյունական տարբերակները (Համասփիռ-Համասփիռ Տաղանդ - Տաղանտ), բայանունները (Յանգունմ, Յօշունմ, Ամբարձունմ) և այլն:

Կայուն կապակցություններն ու դարձվածքները տրված են որոշակի սկզբունքով ու դասավորության կարգով՝ բառակապակցության առաջին բառերի կամ կապակցության հիմնական (իմաստակիր) բաղադրիչների տակ: Այսպես, ԱճԳ գլխաբառի բացատրությանը հաջորդում են հետևյալ դարձվածքները՝

-Ազդ առնել, Իմաց տալ, հայտնել, տեղեկացնել: -Ազդ լինել (իմ), Իմաց տրվել, իմացվել: - Ազդ տալ, Ազդարարել:


Քերականական հղումները տրված են բառարանագրության մեջ ընդունված կարգով. բնութագրված են բոլոր բառերը, հատկապես նյութական բովանդակություն ունեցող (լիիմաստ կամ թեքական) խոսքի մասերը:

Այսպես, հոլովվող անունների դեպքում տրված են եզակի և հոգնակի սեռականի ձևերը, անեզական բառերի դեպքում հաճախ տրված է հոգնակի սեռականը, ինչպես՝ ԱՄՐՈՏ, ի, աց, ԳԵՂԵՑԻԿ, ցկի, կաց, ՂԱՐՁ, ի, ից, ՄԵԾ, ի, աց, ՂՏՈՒՂ, ոյ, ոց, ՔԱԶ, ի, աց: Անեզական բառերի դեպքում հաճախ տրված է հոգնակի սեռականը (նաեւ հոգնակի գործիականը), ինչպես՝ ԳՆԱՅՔ, ցիք, ցիւք, ՄԻՏՔ, մտաց, մտօք և այլն:

Բայերը տրված են անորոշ դերբայի ձևով. Ե և Ի լծորդության բայերը միմյանցից տարբերակելու համար Ի լծորդության բայերի դեպքում փակագծում տրված է սահմանական ներկայի եզակի թվի 1-ին դեմքի վերջավորությունը, ինչպես՝ ԱԳՆԵԼ (իմ), ԲԱԶՄԵԼ (իմ), ԽՕՍԵԼ (իմ), ԲԱՏԱՋՆՁԵԼ (իմ) և այլն:

Բոլոր բայերի համար տրված են անցյալ կատարյալի եզակի թվի 1-ին դեմքի խոնարհման վերջավորությունները՝ բայի խոնարհման տիպը ցույց տալու համար, ինչպես՝ ՆԵՐԵԼ, եցի, ԽՕՍԵԼ (իմ), եցայ, ՀԱՆԴԻՍԱՆԱԼ, ացայ, ԱՅՏՆՈՒԼ, եայ և այլն: Գլխաբառի հիմնական հատկանիշներից հետո նշված է նաեւ բայի սեռը՝ Գ. (ներգործական), չ. (չեզոք), Ի. (հասարակ), ինչպես՝ ԲՆԱԽՕՍԵԼ, եցի, Գ. չ., ՀԱՅԵԼ (իմ), եցայ, չ., ՍԵՐԿԱՆԱԼ, ացայ, ացի, Գ., չ., Ի.:

Բառիմաստի բացատրությունը բառարանի կենտրոնական մասերից մեկն է, որով բացահայտվում են մեծիմաստ և բազմիմաստ բառերի նշանակությունները և դրանք մեկնաբանվում առանձին-առանձին: Սույն բառարանում մասնավորապես կիրառվել են իմաստաբանական կամ նկարագրական սահմանումը (վեր է հանվում բառով արտահայտված հասկացության



բովանդակությունն ու նրա ծավալը), հոմանշային սահմանումը (բառի նշանակությունը սահմանվում է այլ հոմանիշ բառերի միջոցով), բառակազմական սահմանումը (բացատրությունը տրվում է այն բառի նշումով, որից կազմված է ածանցավոր բառը), հղման կարգով սահմանումը (հոմանիշ բառերի իմաստային բացատրությունը չկրկնելու համար գործադրվում է **տե՛ս հղումը**) և այլն:

Բառարանում ճիշտ են լուծված փոխառությունների և բառագործածության ոլորտի հարցերը: Եթե տվյալ գլխաբառը փոխառություն է, ապա գլխաբառից անմիջապես հետո փակագծերում համառոտ նշվում է փոխառության աղբյուրը, ինչպես՝ ԱՄՊԵՏ (պրսկ.), ՀԻԴՊԱՏՈՍ (հուն.), ՀՐԱՄԱՆ (պիւ.), ՆԱԽԱԿԱՏԻՔ (իրան.), ՔԱՅԱՆԱՅ (ասոր.), ԳԱԳԱԹՆ (աքքադ.) և այլն:

Որոշ բառերի դեպքում տրված է միջնորդավորված փոխառության ուղին՝ նշելով թե՛ փոխառու լեզուն, թե՛ փոխառյալ լեզուն, որի միջնորդությամբ տվյալ բառն անցել է հայերեւից, ինչպես՝ ԱԲԲԱՅ (ասոր., հուն.-ից) և այլն:

Որոշ բառերի համար նշված է նրանց (իմաստների) գործածության ոլորտը, ինչպես՝ ՕՐՀՆԵԱԼ, ելոյ, ոց, ա. 1. (կրոն.): ՕՐՀՆՈՒԹԻՒՆ, 7. (եկեղ.) և այլն:

Կարծում ենք՝ բառարանի հեղինակը լիովին առաջնորդվել է բառարանագրության մեջ մշակված սկզբունքներով և դրանք լավագույնս կիրառել իր առաջադիր խնդիրները բարեհաջող կերպով լուծելու համար. այն է՝ նպաստել գրաքարի դասընթացով նախատեսված բնագրերը ճիշտ ու անսխալ թարգմանելուն, օգնել յուրացնելու գլխաբառերի քերականական կարգերն ու նրանց հատկանիշները, ճանաչել տալ գլխաբառերի իմաստային կառուցվածքը և ընդհանրապես ուսանողներին սովորեցնել բառարան «կարդալու» դժվարին գործը:

Հանդգնված ենք, որ պրոֆեսոր Լ. Մ. Խաչատրյանի կազմած «Գրաքարի ուսումնական բառարան» աշխատանքը կարող է ծառայել իր նպատակին և լայն ընդունելություն գտնել հայաստանյան և արտասահմանյան մասնագիտական ամբիոններում ու հայագիտական հաստատություններում:

Գեորգ ԹՈՍՈՒՆՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ուսման հրավեր

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ 2013-2014 ուսումնական տարում Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում բարձրագույն և հետբուհական կրթություն ստանալու նպատակով (2 բուհական, 2 մագիստրոսական և 2 ասպիրանտական կրթաթոշակ):

Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների և բուհերի շրջանավարտները, ինչպես նաեւ ավարտական կուրսում սովորող ՀՀ քաղաքացիները:

Կրթաթոշակներին հավակնող դիմորդները պետք է ներկայացնեն

• դիմում՝ մրցույթին մասնակցելու համար, որում պետք է նշվի նախընտրած մասնագիտությունը,

• դիմում-հարցաթերթիկ, • իրանական կողմից ներկայացված հարցաթերթիկը,

• ինքնակենսագրություն (CV) (անգլերեն),

• ավարտական դիպլոմի և միջուկի, իսկ ավարտական կուրսի/դասարանի ուսանողներն առաջադիմության թերթիկի (ակադեմիական տեղեկանքի) պատճենները՝ նոտարի կողմից անգլերեն կամ պարսկերեն թարգմանված,

• անձնագրի պատճենը,

• բժշկական տեղեկանք (հավելված) (անգլերեն լեզվով),

• 3x4 չափի 5 լուսանկար,

• արական սեռի անձինք՝ զինգրքուկի պատճենը, դրան փոխարինող կցագրման վկայականը կամ զորակոչային տեղամասից համապատասխան տեղեկանք:

Հետբուհական կրթության համար դիմորդները ներկայացնում են նաեւ.

• ռեֆերատ՝ հայերեն լեզվով,

• օտար լեզվի իմացությունը հաստատող վկայական և ստուգարքային թերթիկ՝ համակարգչից օգտվելու հմտությունների վերաբերյալ՝ ՀՀ ԿԳ նախարարի՝ 30.11.2012 N 1093-Ա/Ք հրամանով հաստատված անցումային շենքերի համապատասխան:

Պահանջվող փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացնել 3 օրինակով (փաթեթ + 2 պատճեն):

Մրցույթն անցկացվում է.

• Բակալավրի կրթական ծրագրով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի:

• Մագիստրոսի կրթական ծրագրով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի:

• Ասպիրանտուրայի կրթական ծրագրերով՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 31.05.2013թ. (ներառյալ), ժամը 15:00-17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Բակալավրի և ասպիրանտուրայի մրցույթները տեղի կունենան Երեւանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 միջնակարգ դպրոցում (Այգեստան 9, փող. 4), **ա/թ հունիսի 1-ից 7-ը** ընկած ժամանակահատվածում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ ԿԳ նախարարի արտաքին կապերի և սփյուռքի վարչություն (ք. Երեւան, Կառավարության 3 շենք, VI հարկ, 619 սենյակ, հեռ. 56-23-64):

Առաջնահերթությունը կտրվի կրթության և գիտության զարգացման համար գերակա հանդիսացող մասնագիտություններին:

«Ես արարեցի իմ ուժի չափով...»

Խոսք Լիպարիտ Սարգսյանի ծննդյան 75-ամյակի առթիվ

Ես արարեցի իմ ուժի չափով, Ինձանից ոչ ոք թող չդժգոհի, Առանց աղմուկի ու թոհուրոհի Ես արարեցի իմ ուժի չափով:

Քայլեցի ես իմ պապերի ճամփով, Հավատարիմ միշտ իմ երգի տողին, Ես արարեցի իմ ուժի չափով, Ինձանից ոչ ոք թող չդժգոհի...

Սա նրա խոստովանությունն է՝ անվանի բանաստեղծ, արձակագիր, մանկական երեւելի գրող **Լիպարիտ Սարգսյանի** անկեղծ ու ազնիվ խոստովանությունն իր ընթերցողներին: Եվ դա արհեստական կեցվածք չէ, այլ ստեղծագործական ավելի քան կեսդարյա արգասավոր ճանապարհի ճշմարիտ իմաստավորում, որ իր խորքում նաեւ մարդու արարումների այսպիսի պարզ ու ներհուն շերտեր ունի:

Ամեն մարդ պիտի քայլի իր ճամփով, Ամեն մարդ պիտի իր հողն ակոսի, Իր ջուրը խմի սեփական ակոսի, Եվ Աստծո հետ իր բարբառով խոսի...

Սա էլ նրա դավանանքն է՝ մարդու կյանքի, ստեղծագործող-արարող մարդու գոյակերպի չափանիշը: Նաեւ իր Լիպարիտ Սարգսյան գրողի ստեղծագործական կյանքի խորհրդանիշը: Ինքն էլ արդեն քանի՞ տասնամյակ մեր գրականության մայրուղու իր կածանով է քայլում, իր Լոռվա աշխարհի ցավոտ ու ոգեղեն հողն է «ակոսում», այդ հողից ակունքված ջուրն է «խմում» սեփական ակոսով եւ ստեղծագործական խորհրդանիշների Հող հայրենիի, Մարդու արարումների, Կենաց ջրի, Արարիչ Աստծո հետ խոսում է իր բնաբուխ բարբառով՝ ինքնատիպ խոսք ու խոսով:

Երեք տասնյակի սահմանն անցած գրքերի խորագրերն իսկ նույնն են վկայագրում, այն առաջին երկունքից՝ «Սպասումներ»-ից մինչեւ «Մի բուռ ցորեն» եւ «Մարդ ու հող», մինչեւ «Ակոս» ու «Մենախոսություն», «Ցորնաշեղջ», «Խաչված ճակատագիր», «Հող եւ հաց», մինչեւ իր մարդկային եւ ստեղծագործական ազնիվ նկարագրին համահունչ խոստովանություն՝ «Սիրտս ձեզ եմ բացում», «Մեզ մեր հավատն է պահել», «Գանձերս երգերն են իմ»...

Մի խոսքով, բանաստեղծական ընտրանի ժողովածուների լեզվով ասած, նա մեզ նվիրել է մի «Հազարադուռ աշխարհի» ու մի «Արարման խորհուրդ», որոնց գլխավոր հերոսը՝ իր ողջ ստեղծագործական աշխարհի գլխավոր հերոսը, «հայրենի հողում ակոս բացող, հաց արարող, երկիրը շեն պահող մարդն է, հայ մարդը»:

Սա դեռ միայն «մեծերի» բանաստեղծի անցած ստեղծագործական ճանապարհն է՝ չընդմիջվող անկեղծ ու ոգեղեն «մենախոսություն» ինքն իր հետ, հողի ու մարդու հետ, աշխարհի հետ: Այո՛, նաեւ աշխարհի հետ, բառիս բուն իմաստով, քանզի նրա բանաստեղծություններից շատերը թարգմանվել ու հրատարակվել են մի շարք այլ լեզուներով:

Բայց նրա ճանապարհը միայն պոեզիայի աշխարհով չի անցել: Հայրենի Լոռվա բնաշխարհի ու նրա մարդկանց հանդեպ խանդավառագին սերը, «պատերազմական» մանկության ու ցավոտ պատանեկության ժամանակների կուտակումները նաեւ ինքնատիպ արձակ են ծնել, եւ անցած դարավերջի ու նոր դարասկզբի մեր գրականության մեջ արձա-

կագրի վաստակը նույնպես մնայուն արժեքներով է նժարվում:

Բնաշխարհը, մարդն ու հողը, մարդն ու ժամանակը, մարդն ու նրա ճակատագրի կեռմաններն այդ ժամանակի խաչմերուկներում ցավի ու տագնապի, հուսո ու հավատի սեւեռումներով իրենց արձագանքն են գտել նրա արձակում, ժանրային տարբեր ներկայացնելով պատմվածք, մանրապատում, վեպ, վիպակ... Արձակի «բերքն» էլ բավական ծանրակշիռ է՝ 1976-ին հրատարակված «Շյուղը կտորած խնձորենին» պատմվածքների ժողովածուից, «Ձորավոր կաղնին» համանուն վիպակն ու պատմվածքներ ընդգրկող գրքից մինչեւ ինքնակենսագրական ատաղձով «Վահագնի» վեպ ու «Արմատահան ծառեր» ժողովածու, որի համար արժանացավ Հայաստանի գրողների միության Ստեփան Զորյանի անվան մրցանակին:

Եվ վերջապես, բանաստեղծությունից արձակ երկարատեւ ընդմիջումից հետո՝ վերադարձ «Մանկության արահետ»՝ վիպակ ու պատմվածքներ՝ հասցեագրված մանուկ ու պատանի ընթերցողներին...

Սիւս վերջապես միասին մտանք այն արահետը, որ տանում է «մանկական մոլորակ», որի հավատարիմ ու սիրելի բնակիչն է տասնամյակներ շարունակ այն առաջին «Մարի աղբյուր», «Փաթիլի երգը», «Ձնծաղիկներ» ժողովածուներից մինչեւ... «Վահեի երգը» (ու նորից ՀԳՄ մրցանակ՝ այս անգամ Վախթանգ Անանյանի անվան), մինչեւ առայժմ վերջինը՝ «Ճոճահավը»: Ու սրանց «արանքում» մանկական բանաստեղծությունների ավելի քան 15 ժողովածու: Բանաստեղծություններից լավագույնները տեղ են գտել մայրենիի դասագրքերում, հնչում են դպրոցական բեմահարթակներից՝ նաեւ կոմպոզիտորների հյուսած երգերի մեղեդիներով...

Եվ ինչ-որ տեղ դժվար է որոշել, թե ում գրողն է նա՝ մեծերի՞, մանուկների՞ ու պատանիների՞ (չէ՞ որ շատերը նրան ավելի շուտ «մանկագիր» պատվանունով են դիմում), թե՞ (եւ սա իմ կարծիքն է) նրա ստեղծագործությունները պարզապես տարիք չեն ճանաչում. մանուկներին ու պատանիներին հասցեագրված շատ



գործեր սիրով ընթերցում են նաեւ տարեցները, եւ, ընդհակառակը, «մեծական» ստեղծագործությունների զգալի մասը, նույնիսկ իմաստախոս հրաշալի քառյակները, երեխաներն են «սեփականացրել»: Այդպես է պատահում բոլոր այն երեւելի գրողների հետ, ովքեր ստեղծագործում են մի քանի «ճակատում», եւ այս դեպքում հաճախ տարիքային սահմանները խախտվում են:

Հավատարիմ ընթերցողները նրան ճանաչում են նաեւ՝ որպես մեր կյանքի ցավոտ խնդիրներին, մշակույթին, գրականությանը, մայրենի լեզվին եւ ոգեղեն այլ արժեքներին վերաբերող, իրեն հուզող հարցերին նվիրված հրապարակախոսական թե՛ հողվածների հեղինակի: Ու նաեւ հեղինակ հայ երեւելիներին նվիրված հրաշալի հուշակնարկների, խոհագրությունների, որոնք ամփոփված են «Հիշողության արահետներով» ժողովածուում:

Վերջապես դնելուց առաջ անկեղծորեն պիտի ընդվզեն «թերարժեքության բարդույթով» պարտադրված նրա անկեղծ «խոստովանությունների» դեմ, որ մեջբերեցի սկզբում՝ «Ա՛խր, ես պիտի

կարգին բանեի // Ա՛խր, ես պիտի շատ գործ անեի», «Ինձանից ոչ ոք թող չդժգոհի // Ի՞նչ ես արարեցի իմ ուժի չափով...»: Ի՞նչ դժգոհել, ի՞նչ բան: Վստահաբար նորից ասեմ, որ նա քիչ բան չի արել մայրենի գրականության վերընթացի ճանապարհին եւ արել է այն, ինչ կարողացել է, իսկ կարողացել է շատ բան անել եւ արել է լավ:

Հորեւյանի առթիվ գովեստի շռայլ խոսքեր չեն սրանք՝ ասված հավուր պատշաճի կամ վերապահումով: Լիպարիտ Սարգսյանը, իրոք, ազգային նորոյա գրական ակոսի բազմաշնորհ ու տրեմաջան հերկվորներից է եւ իր ստեղծած գրականությունը, կրկնում եմ, անցած դարավերջի երեք տասնյակների եւ նոր դարամուտի մեր պոեզիայի ու արձակի (այդ, նաեւ մեր մանկապատանեկան պոեզիայի ու արձակի) մայրուղու բարի ու լուսավոր երակներին մեկն է, եւ որ նա այդ մայրուղուն հաստատ թողել է իր հետագիծը: Ու թե դժգոհություն էլ լինի՝ ոչ ինքն իրենից, այլ հենց մեզանից. չէ՞ որ նրա ստեղծագործությունը, այդ իմաստով, ընդհակառակը, կարծում եմ, առ այսօր գրաքննադատության կողմից ըստ արժանվույն չի գնահատվել, եւ ասվածն էլ սահմանափակվել է հիմնականում գրախոսությունների շրջանակով: Պատճառներից մեկը թերեւս նրա մարդկային տեսակն է, համեստ կեցվածքն ու չպարտադրող ներկայությունը, ազնիվ ու անաղմուկ ստեղծագործական կենսակերպը՝ հեռու շատերին բնորոշ թմբուկչեփորային ծնծաղներից...

...Ու հիմա, երբ նա արդեն յոթանասունհինգ (անհավատալի է), թե՛ մանկագրական լեզվով ասած՝ յոթ անգամ տասը են հինգ տարեկան է, իր անձի եւ ստեղծագործական արարումների հանդեպ սիրո ու խոնարհումի զգացումներով, հորեւյանի առթիվ ջերմորեն շնորհավորեմ նրան եւ մաղթեմք, իր խոսքերով՝ նոր «երկունքների հրաշք պահեր» կյանքի Բացվող օրերի ճանապարհին:

Այդ ճանապարհին միշտ հանդիպելու հավատով՝

Լյուդվիգ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Մեծարման ցերեկույթ

Օրեր առաջ, Երեւանի «Առնո Բարաջանյան» համերգասրահում, ՀՀ մշակույթի նախարարության, Հայաստանի գրողների միության եւ Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի նախաձեռնությամբ, հանդիսավորությամբ նշվեց **Լիպարիտ Սարգսյանի** ծննդյան 75-ամյակը: Հորեւյանին ուղղված օրհնանքի խոսքով հանդիսությունը բացեց **Կոմիտաս վարդապետ Հովնանյանը**: Այնուհետեւ անվանի բանաստեղծի, արձակագրի, մանկագրի ստեղծագործական վաստակի գնահատանքի եւ շնորհավորանքի ջերմ խոսքերով հանդես եկան ՀԳՄ քարտուղար, գրահրատարակչության կենտրոնի տնօրեն **Էվվարդ Միլիտոնյանը**, Մշակույթի նախարարության ժամանակակից արվեստների վարչության գլխավոր մասնագետ **Վարդան Գրիգորյանը** (նա հորեւյանին հանձնեց նախարարության «Գրիգոր Նարեկացի» մեդալ եւ պատվոգիր), Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ **Հովիվ Շեխոյանը**, ՀՀ լեզվի պետական տեսչության պետ, «Լոռվա ծոր» հայրենակցական միության նախագահ **Սերգո Երիցյանը** (գրողին նվիրելով միության հովանավորությամբ հրատարակված «Գանձերս երգերն են իմ» ժողովածուն), բանասիրական գիտությունների դոկտոր **Լյուդվիգ Կարապետյանը**, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր **Հովհաննես Այվազյանը**, «Տերյան» մշակութային կենտրոնի նախագահ **Առուշան Հակոբյանը**, Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի տնօրեն, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Հասմիկ Կարապետյանը**:

Հանդիսությունն ուղեկցվեց գրողի ստեղծագործությունների՝ մեջընդմիջվող հետաքրքիր մատուցմամբ, որ ներկայացրին **Գայանե Սամվելյանը** (ով նաեւ ցերեկույթի վարողն էր), ՀՀ վաստակավոր արտիստուհի **Գրետա Մեջլումյանը**, Երեւանի հ. 135 դպրոցի աշակերտները, Լիպարիտ Սարգսյանի ղեկավարությամբ Ավ. Իսահակյանի անվան գրադարանում գործող «Բողոքներ» մանկապատանեկան գրական ստուդիայի սան **Մարիաննա Ղազարյանը**: Բանաստեղծի տեքստերով երգերը կատարեցին «Մարինա» մանկական երգչախումբը (ղեկավար՝ **Գրիգոր Նաջարյան**), երգահաններ **Հռիփսիմե Խրիմյանը**, **Լիլիթ Համբարձումյանը**՝ «Ձատիկ» երգի մանկական ստուդիայի սաների հետ: Հորեւյանին ու հանդիսականներին երգերով ողջունեցին նաեւ երգիչներ **Արմեն Դարբինյանը**, **Արսեն Համբարյանը**, իսկ վերջում ազգագրական պարերի կատարումներով հանդես եկավ «Կարին» համույթը (ղեկավար՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Գագիկ Գինուսյան**):

Լիպարիտ Սարգսյանի եզրափակիչ շնորհակալական խոսքը նաեւ խոստում էր՝ իր ստեղծագործական հետագա գործունեությամբ շարունակելու հավատարմորեն իրականացնել մայրենի գրականության զարգացման նվիրական առաքելությունը:

Նինել ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Դադարեց բաբախել մի մարդու սիրտ, ով անմնացորդ նվիրվեց մատաղ սերնդի դաստիարակության գործին:

Նինել Գեւորգի Կարապետյանը

հրաժեշտ տվեց երկրային կյանքին: Ն. Կարապետյանը ծնվել է 1950 թվականին, Սիսիանում:

1975 թվականից աշխատել է քաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցում (այժմ՝ ավագ դպրոց)՝ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի:

Ն. Կարապետյանը բանիմաց էր, շրջահայաց, ներողամիտ: Նա կյանքի դասեր տվեց իր սաներին, կապող օղակ դարձավ սերնդափոխության ոլորաններում:

Ն. Կարապետյանին ճանաչողները միշտ էլ առանձնակի հարգանքով ու սիրով են խոսում նրա մասին:

Ցավոք, հարգված, սիրված մանկավարժը շուտ լքեց մեզ:

Դպրոցի ողջ կոլեկտիվը, սաները երբեք չեն մոռանա սիրելի Ն. Կարապետյանին եւ միշտ վառ կպահեն նրա անունն ու հիշատակը:

ՀՀ ԿԳՆ Սիսիանի ավագ դպրոցի կոլեկտիվ




Ուտքերում թուլություն եւ ծանրություն, այրոց եւ ծակծկոց, ջղաձգություններ եւ այտուցներ. մեզնից ո՞վ չի բախվել այս, թվում է թե ժամանակավոր, տկարություններին:

Շատ դեպքերում դա պայմանավորված է մեր ապրելակերպով: Շատ մասնագիտություններ կարելի է դասել վարիկոզի առաջացման ռիսկային խմբերին:

«Ռիսկային» մասնագիտություններ.

Առաջին հերթին դրանք վարսավիրներն են, վիրաբույժները, վաճառողները, մատուցողները, մերստողները, ուսուցիչները, խոհարարները:



թուլացում, վերջույթներում արյան հոսքը դժվարանում է, ինչը հանգեցնում է երակներում արյան կանգի, այտուցի առաջացման, ուտքերում ծանրության եւ նույնիսկ ջղաձգությունների:

Եվս մեկ գործոն, որը բարձրացնում է երակային անբավարարության առաջացման վտանգը. դա բարձր կրունկով կոշիկների կրումն է: Այստեղ վտանգի մեջ են գտնվում այնպիսի մասնագիտությունների կանայք, ինչպիսիք են բրենդային խանութների եւ բուտիկների վաճառող-խորհրդատուները, մոդելները եւ այլն:

Սակայն վարիկոզ ձեռք բերելու վտանգ կա ոչ միայն «կանգնած», այլ նաեւ «նստակյաց» մասնագիտություն ունեցողների մոտ՝ դրամարկղի աշխատողներ, օֆիսային աշխատողներ, ծրագրավորողներ, վարորդներ եւ այլն: Հողային վիրաբույժները այսպիսի դեպքերի համար մտածել են հետեւյալ տերմինը՝ «համակարգչային վարիկոզ»:

Այս բոլորն ավելի խորանում է այն մարդկանց մոտ, ովքեր սիրում են ուտքը ուտքին զցած նստել: Այդ դիրքում սեղմվում է ծնկային երակը եւ արդյունքում ուտքերում առաջանում է այտուց եւ ծանրություն:

Առողջ երակների համար

Եվս մեկ ռիսկային խումբ են կազմում այնպիսի մասնագիտությունների ներկայացուցիչները, ում աշխատանքը կապված է ծանրությունների բարձրացման հետ՝ լինեն նրանք ծանրամարտիկներ, թե բեռնակիրներ: Ծանրության բարձրացման պահին տեղի է ունենում ներորովայնային ճնշման կտրուկ բարձրացում, որն առաջացնում է երակային պատի լայնացում՝ խախտելով սրտի փականային ապարատի աշխատանքը եւ այլն:

Պատմությունը «Խրոնիկ երակային անբավարարություն» տերմինն իր մեջ ներառում է վարիկոզը եւ տրոմբոֆլեբիտը: Ցավոք, ոչ բոլորն են շտապում օգնության համար դիմել բժշկությանը, իսկ այդ ընթացքում հիվանդությունը զարգանում է: Վերջին ժամանակներում հիվանդությունը դարձել է այնքան տարածված, որ մասնագետներն այն անվանում են «Քաղաքակրթության հիվանդություն»:

Ախտանիշները

Խրոնիկ երակային անբավարարությունը տարբեր կերպ է արտահայտվում՝ կախված զարգացվածության աստիճանից: Երակային անբավարարության ամենաառաջին անհանգստացնող ախտանիշներն են համարվում ուտքի սրունքի եւ թափայտուցվածությունը: Ուտքերի մակերեսին առաջանում է երակային ցանց, իսկ հետո նկատելի են դառնում լայնացած մուգ վարիկոզային երակները: Եթե հիվանդությունը չբուժվի, այն կարող է հանգեցնել ավելի մեծ բարդությունների: Ուտքերի տուժած հատվածներում մաշկը դառնում է չոր եւ զգայուն, ինչը հաճախ կարող է հանգեցնել տրոֆիկական խոցերի:

Յուրահատուկ միջոց

Vision ընկերության նոր մշակումը՝ ՎենոՍթրոնգը, ազդում է երակային անբավարարության բոլոր պատճառների վրա միաժամանակ, եւ այն օգնում է պայքարել դրանց դեմ: Այս բնական արտադրանքի յուրահատուկ կառուցվածքը հատուկ մշակվել է երակային համակարգի վրա բազմակի ուղղվածությամբ ազդելու համար:

ՎենոՍթրոնգը

ազդում է երակային անբավարարության բոլոր պատճառների վրա միաժամանակ, եւ այն օգնում է պայքարել դրանց դեմ: Այս բնական արտադրանքի յուրահատուկ կառուցվածքը հատուկ մշակվել է երակային համակարգի վրա բազմակի ուղղվածությամբ ազդելու համար:



ՎենոՍթրոնգ համալիրի ստեղծման համար ընտրվել են ամենավ բուսական բաղադրիչները, որոնք արդեն իսկ ներկայանում են՝ որպես երակային անբավարարության դեմ ամենաարդյունավետ բնական միջոցներ:

Թրնջենու պտուղների մզվածքն ունի երակատոնուսավորող ազդեցություն, ամրացնում է անոթների պատերը, նվազեցնում է երակային առաձգականությունը:

Ցիտրուսայինների կեղևի մզվածքը կանխում է այտուցը, ուտքերում ծանրությունը, ջղաձգությունները, հոգնած ուտքերի համախտանիշը եւ արդյունավետորեն բարձրացնում է տոկոսությունն ու աշխատունակությունը:

Խաղողի չեչի մզվածքը նպաստում է ցավի վերացմանը, նվազեցնում է ջղաձգությունները, թմրումը եւ ծակծկոցը, հատկապես գիշերային ժամերին: Լավացնում է երակային արյան շրջանառությունը:

Գոտու կոլայի (ցենտալլա ասիական) մզվածքը լավացնում է արյան շրջանառությունը, նպաստում է անոթների պատերի առողջ վիճակի արագ վերականգնմանը:

Պապայայի մզվածքը նվազեցնում է արյան մածուցիկությունը եւ լավացնում է միկրոշրջանառությունը՝ կանխելով տրոմբոֆլեբիտի զարգացումը:

ՎենոՍթրոնգ համալիրը ոչ միայն կվերացնի է հիվանդության ախտանիշները, այլ նաեւ կկանխի լուրջ բարդությունների զարգացումը, որոնք հատուկ են երակային անբավարարությանը:

ՎենոՍթրոնգ՝ ամբողջ աշխարհը ձեր ուտքերի տակ:

Մանրամասն տեղեկությունների համար դիմեք Vision-ի խորհրդատուներին: www.armvision.am

R

«Կենդուրու 2013»-ն ունի չորս հաղթող

«Կենդուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթի արդյունքների վերջնական ամփոփումից պարզ դարձավ, որ «Կենդուրու 2013»-ում հաղթող է ճանաչվել չորս աշակերտ.

Աննա Գասպարյան - 4-րդ դասարան, Գեղարքունիքի մարզ, Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց,

Ջայկ Արեգ Խաչիկյան - 4-րդ դասարան, Երեւան, Յ. Օշականի անվան թիվ 172 հիմնական դպրոց,

Սերյոժա Դանիելյան - 4-րդ դասարան, Շիրակի մարզ, Գյումրու «Պրոգրես» համալսարանի հենակետային դպրոց-վարժարան,

Վահագն Շախկյան - 8-րդ դասարան, Երեւան, Երեւանի պետական համալսարանին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց:

Ըստ մրցույթի կազմակերպիչ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից սահմանված կարգի՝ կազմակերպիչներն անձամբ են հանդիպում բոլոր հաղթողների հետ՝ համոզվելու, որ հաղթանակն արդար է եւ արժանի: Եվ շատ ուրախալի է, որ վերոնշյալ բոլոր չորս հաղթողներն էլ խելացի, պայծառ եւ ըստ արժանվույն հաղթողի կոչմանն արժանացած երեխաներ են:

Չիչեցենցը, որ «Կենդուրու» արդեն հինգերորդ տարին անընդմեջ անցկացվում է Հայաստանում, երրորդ տարին՝ նաեւ Արցախում: «Կենդուրու 2013»-ին մասնակցել է 3-12-րդ դասարանների 39 214 աշակերտ՝ Հայաստանի եւ Արցախի 960 դպրոցներից: Ի լրումն չորս հաղթողների՝ մրցույթում լավագույն արդյունք է ցուցաբերել եւ պատվոգրի ու մրցանակի արժանացել 559 աշակերտ՝ մոտ 110 աշակերտով ավելի, քան անցյալ տարի: «Այբ» հիմնադրամի կողմից լրացուցիչ հատուկ խրախուսական մրցանակներ են շնորհվում եւս 778 աշակերտի՝ բոլոր այն դպրոցներում, որտեղ չկան «Լավագույնի» շենք հաղթահարած երեխաներ: Այսպիսով, ընդհանուր թվով 1341 աշակերտ «Կենդուրուի» կողմից այս տարի կարժանանա մրցանակների:

Մրցանակաբաշխությունների մասին: Մայիսի 21-ից 31-ը «Այբ» կրթական հիմնադրամի կազմակերպիչները կշրջեն Հայաստանի 29 քաղաքներով, ինչպես նաեւ կլինեն Ստեփանակերտում, որպեսզի անձամբ հանձնեն երեխաների հավաստագրերը, պատվոգրերն ու մրցանակները:

Մրցանակաբաշխությունների ժամանակացույցը՝ ըստ քաղաքների եւ ամսաթվերի, տես՝ www.kangaroo.am կայքէջում:

Հայաստանում «Կենդուրու» մրցույթի բացառիկ կազմակերպիչն է «Այբ» կրթական հիմնադրամը:

Մրցույթն անցկացվում է Հայաստանում՝ ՀՀ կրթության եւ գիտության, Արցախում՝ ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարությունների հովանու ներքո:

Ռուսաց լեզվով խնդիրները լուծելու հնարավորությունը ընձեռնվել է ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանատանն առընթեր «Ռուստորուդնիչեստվո» ներկայացուցչության հետ համագործակցության շնորհիվ:

Հայաստանում մրցույթի կազմակերպման գործընկեր՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ:

Ինֆորմացիոն հովանավորներ՝ «Սեդիանաքս» լրատվական գործակալություն եւ «Կրթություն» շաբաթաթերթ:



ՀԺՀ 2013
Մանկավարժական գիտաժողով

Հանրապետական գիտագործնական մանկավարժական գիտաժողով
«Հանրակրթության ժամանակակից հիմնախնդիրներ»

ՀՀ ԿԳ նախարարությունը, Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանը, ՀՀ ԿԳԿ կրթության ազգային ինստիտուտը եւ «ԱՄԱ» մանկավարժական հասարակական կազմակերպությունը **2013 թվականի հոկտեմբերի 28-29-ին** Երեւանում անց են կացնում **«Հանրակրթության ժամանակակից հիմնախնդիրներ»** մանկավարժական գիտաժողով:

Գիտաժողովը ներառում է հետեւյալ ուղղությունները.

1. Կրթության կառավարման եւ դպրոց-բուհ համագործակցության հեռանկարներ,
2. Նորարարական մանկավարժական տեխնոլոգիաներ եւ ներառական կրթություն,
3. Ուսուցման արդյունավետության եւ կրթության որակի ու զնահատման հիմնախնդիրներ:

Գիտաժողովին կարող են մասնակցել ընդհանուր եւ մասնագիտական մանկավարժական կրթության ոլորտի գիտնականներ, մանկավարժներ եւ վարչական աշխատողներ: Ընդունվում են աշխատանքներ նաեւ արտերկրից: Զեկուցումները կարելի է ուղարկել manager177@mail.ru էլ.հասցեով, **մինչեւ ս.թ. սեպտեմբերի 10-ը**: Աշխատանքները ենթարկվում են պարտադիր գրախոսության: Խմբագրական խորհուրդը պարտավորվում է 2 շաբաթվա ընթացքում տեղեկացնել հեղինակին՝ աշխատանքը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ:

Գիտաժողովին կարելի է մասնակցել ինչպես զեկուցումով, այնպես էլ առանց զեկույցի: Մասնակցության վճարը՝ 6000 դրամ: Մասնակիցները կապահովվեն գիտաժողովի աշխատանքային փաթեթով, ընդմիջումների ժամանակ՝ սնունդով: Ճանապարհածախսը չի փոխհատուցվում, հյուրանոց չի տրամադրվում:

Պահանջներ գիտաժողովին ներկայացվող աշխատանքներին:

Բովանդակություն: Ընդունվում են մանկավարժական տեսության եւ պրակտիկայի համար նշանակալից նոր գիտական արդյունքներ պարունակող հոդվածներ եւ ակնարկներ, հաղորդագրություններ գիտական հետազոտությունների, գործնական փորձի կամ գիտական նոր գաղափարների մասին:

Ծավալ: Աշխատանքի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի A4 ֆորմատի 6 էջը (պահանջը չի վերաբերում պատվիրված էլույթներին)՝ ներառյալ ռուսերեն եւ անգլերեն ամփոփագրերը, բոլոր աղյուսակները, գրաֆիկական պատկերները եւ գրականության ցանկը: Ամփոփագրերը պարտադիր են, դրանց ծավալը, յուրաքանչյուր լեզվով, բացի հեղինակների եւ վերնագրի հղումից, չպետք է գերազանցի 6 տողը:

Ձեւավորման պահանջներ: Աշխատանքները հավաքվում են Armenian Unicode՝ Sylfaen տառատեսակով (12 տառաչափով), A4 (296x210 մմ) էջերի վրա, էջում՝ 28-30 տող, 1.5 միջտողային չափով: Էջերը պետք է ունենան լուսանցքներ (ծախից՝ 30 մմ, վերելից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքելից՝ 25 մմ): Սկզբում նշվում են աշխատանքի վեր-ՆԱԳԻՐԸ (մեծատառերով), այնուհետեւ՝ հեղինակները՝ Ազգանուն Անուն, գիտական աստիճան, կոչում, աշխատանքի վայր, պաշտոն: Պարբերությունների առաջին տողերը՝ 15 մմ բացթողումով: Գրականության հղումները տեքստում (5 հղումից ոչ ավել) տրվում են քառակուսի չակերթներով, (օրինակ՝ [1,3]): Գրականության ցանկում աղբյուրները նշվում են այբբենական կարգով, բոլոր ելքային տվյալներով:

Գիտաժողովի կազմկոմիտե

Տեղեկատվական հովանավոր՝ «Կրթություն» շաբաթաթերթ



«Կրթություն» շաբաթաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի հունիսի 5-ին

ՀԻՄՆԱԳԻՐ՝
ՀՀ ԿԳԿ
«Կրթություն» թերթի խմբագրություն» ՊԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ա-049349, Տրված է՝ 11.01.2001թ. Դասիչ՝ 69312, Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ ՄեժԻ 67, E-mail: krtutun@yandex.ru ԳեՌ. 57 49 56

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ Մեժ» հրատարակչության տպարանում: Տպաքանակը՝ 3500: Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 21.05.2013թ. Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
ԳԱԳԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ